№ 164 ԿԻՐԱԿԻ 28 ՅՈՒԼԻՍԻ

1913
ՔԱՌԱՍԱՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ 28 ՅՈՒԼԻՍԻ № 164

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի.
Առանձին հաւարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул. № 5.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տէլէֆոն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.
Տպարանի տէլէֆոն № 67.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՆԵՐՈՒՆԻ

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ".
TIFLIS, Rédaction du journal „MSCHAK".

ՕԳՈՍՏՈՍԻ 1-Ի8 ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱԾ ՎԵՐՋԸ 5 ՌՈՒԲ.
Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած:
Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կ. նամակատոմար, ՀԻՆ ՀԱՍՑԷՆ եւ 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԻՆ ԱՆՇԵՏՆԻԱՆՔ.
Յայտարարութիւնների համար պիտի վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ՝ -20 կ., IV երեսի վրա—10 կոպ.:
Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торг. Дома Л. и Э. Метцль и К°, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնայում՝ Большая 38 Քարկում՝ 8 Площадь Биржи.
1913 թւի տարեկան բաժանորդները, որոնք առ 1-ն յունվարի 1914 թ. լրիւ վճարած կունենան բաժանորդավճար 10 ռուբլին, ծրիարար կը ստանան հետեւեալ 2 գրքերը. 1) «Մշակ» եւ հայ կինը», 2) «Մշակի» քառանամակ»:
ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

1913 Թ. ԸՆԹԱՑՔՈՎ

ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

ԲԱՇԽԵԼՈՒ Է ԵՐԵՔ ՄՐՑԱՆԱԿ

ա) Ցանուն տիկ. Մ. Մակարեանի լաւագոյն ինքնուրոյն պիէսի համար (150 ր.): բ) «Օբելեանական» (ի յիշատակ ռուսահայ թատրօնի 50-ամեակի) լաւագոյն թարգմանական պիէսի համար (100 ր.): գ) Ցանուն Ա. Մելիք-Այվազեանի լաւագոյն, ոչ մի տեղ չը ներկայացված ինքնուրոյն պիէսի համար (150 ր.):

Հեղինակները և թարգմանիչները, եթէ ցանկանում են գաղտնի պահել իրանց անուն-ազգանունը, կարող են կեղծ անուն գրել պիէսների վրա, իսկական անուն-ազգանունները գրելով մի փակ ծրարի մէջ, ուր կը բացվի միմիայն մրցանակաբաշխ յանձնաժողովի որոշումից յետոյ:

Այս տարի պիէսները ընդունվում են մինչև սեպտեմբերի 20-ը, որից յետոյ ստացված պիէսները քննութեան չեն առնվի:

Մրցանակի կարելի է ներկայացնել մի քանի նոր պիէսներ, այսինքն այնպիսի պիէսներ, որոնք հայ բեմի վրա դեռ չեն ներկայացված կամ առաջին անգամ ներկայացված են վերջին թատերաշրջանում (առաջին և երկրորդ մրցանակներ):

Մրցանակը կարող է յատկացվել լիովին կամ կիսով չափ, նայելով պիէսի գրական արժանաւորութիւններին:

Մրցանակի արժանացած պիէսի առաջին ներկայացման իրաւունքը պատկանում է Դրամատիկական Ընկերութեան և այդ ներկայացման համար խորհուրդը թարգմանիչներին ոչինչ չէ վճարում, իսկ ինքնուրոյն պիէսների հեղինակներին վճարում է զուտ արդիւնքի 10 տոկոսը:

Այդ իրաւունքը վերապահվում է խորհրդին միմիայն մի տարվայ ընթացքում՝ սկը՝սած պիէսի առանալու օրից:

Պիէսները պէտք է ուղարկել խորհրդի նախագահին հետեւեալ հասցէով՝ Тифлисъ ул. Паскевича № 1. Г. М. Цуриняну. Արտասահմանից՝ Tiflis (Russie) rue Paskevitch № 1. M-r G. Zourinian. (28,11) առ. 581. 3—2

Ղարաբաղի Հայոց Թեմական Հոգեւոր Դպրեւանոցի
75-ԱՄԵԱՅ
ՅՕԲԵԼԵԱՆԻ ՀԱՆԴԷՍԸ
կատարվելու է սոյն թի օգոստոսի 10-ին եւ 11-ին:
Հոգաբարձութիւն և Կենտրօնական Յօբելեանական Յանձնաժողով
(հ.կ.) առ. 585. 3—2

Պատիւ ունենք յայտարարելու, որ „ՌԷԿՏԻՖԻԿԱՏ" Ընկերակցութեան ԳՐԱՄԵՆԵԱԿԸ և ԳՈՐԾԱՐԱՆԸ, ներկայումս
„Դ. Զ. ՍԱՐԱՋԵՎ" ֆիլմայի տակ գործող, որոնք գտնվում են Զէրբէլօվսկայա փողոցում (Նախկին Աւճարսկայա),
ՓՈԽԱԴՐՎՈՒՄ ԵՆ ՆՈՐ ՇԻՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ ՆՈՅՆ ՓՈՂՈՑՈՒՄ, ՏՈՒՆ ԵՂԻԱԶԱՐՈՎԻ № 65.
Խորին յարգանքով՝
«ՌԷԿՏԻՖԻԿԱՏ» ԸՆԿ. ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
(Ե.) առ. 599. 2—1

Կովկասի Հայոց Բարեգ. Ընկերութեան վերակազմած
„ԽՈՒԴԱԴԵԱՆ ԱՊԱՍՏԱՐԱՆՈՒՄ"
Ընդունվում են վճարով աշակերտուհիներ, որոնք ցանկութիւն կունենան իրանց նուիրելու հայ դպրոցներում ՈՒՍՈՒՑՉՈՒՀՈՒ, ՏՆԱՑԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒՀՈՒ ԵՒ ՄԱՆԿԱՐԱՐՁՈՒՀՈՒ ՊԱՇՏՕՆՆԵՐԻՆ:
Խնդրատուները պէտք է ունենան ոչ պակաս քան հայոց եկ.-ծխ. երկդասեան դպրոցի կրթութիւն և պէտք է սովորեն տեղիս հայ միջնակարգ դպրոցներում և կամ մանկաբարձական կուրսերում: ՎՃԱՐՆ Է ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱԾ ՀԱՄԱՐ 150 ՌՈՒԲԼԻ: Ընկերութիւնը տալիս է նրանց բնակարան և մնուն: Խնդիրները կանխավճար 25 ր. հետ միասին ընդունվում են մինչև օգոստոսի 20-ը:
ԾԱՆՈԹ.—Եթէ ցանկացողների թիւը 15-ից չանցնի, մտած խնդիրները կը վերադարձվեն հինգ օրվայ ընթացքում:
Հասցէն՝ Тифлисъ, Абасъ-Абадская пл. д. соб. № 7.
(Հ.ուս.) առ. 592. 3—1

ՆԿԱՐԻՉ
Ա. ՖԷԹՎԱՃԵԱՆԻ
ԱՆԻԻ ԱԼԲՕՄԸ
գունատիպ
Այս տեսած Վիէննայի Գռաֆիչէ Քունստ Ինդուստրի Գայսերական Ընկերութեան տպարանում:
ԾԱԽՎՈՒՄ Է Թիֆլիսում. մեծաքանակ—Մատենցեանցի խանութում (Մադաթեան կղզի). իսկ հատով—«Ալան և նուար» խանութում և «Գուտենբերգ» գրավաճառանոցում:
Գինը—հատով՝ 1 ր. 20 կ., մեծաքանակ գնողներին զեղչ 20%.
(հ.կ.) առ. 423. 25—19

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. Ի. ՄՈՒՐԱԴԵԱՆ
Օգնական Prof. Posner-ի
Ընդունում է միզասեռական (վեներական) հիւանդներին Բերլինի իր խորհրդակցական կաբինէտի և պրոֆ. Պոզնէրի կլինիկայի մէջ: Տալիս է նաև խորհուրդներ միւս մասնագիտութիւնների վերաբերեալ:
Հասցէն՝ D-r Muradoff Berlin. Iohannisstr. 15 (an der Friedrichstrasse). Telefon amt Norden 113—19.
(Կ.) առ. 830. 0—33

ԲԺԻՇԿ
ՅՈՒԹԱՆԻԿ ՆԱԲԱԹԵԱՆ
Ընդունում է հիւանդներ կանանց և մանկաբարձութեան վերաբերեալ ամեն օր, բացի կիրակի օրերից, երեկ. ժամը 5—6-ը:
Հասցէն՝ Բոլշէչվսկայա № 1.
առ. (Ե.հ.կ.) 4. 100—82

По умѣреннымъ цѣнамъ
Новѣйшихъ взящныхъъ рисунковъ.
ПОЛНОМѢРНЫЕ
ОБОИ
ФАБР. СКЛАДЪ
МАНГИКІАНА
ПУШКИНСКАЯ № 7.
357. 50—25 (Հ. Կ.)

ԿՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԵՒ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ
ՄԱՍՆԱՒՈՐ
ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Ռտիշչէվսկայա 13, տէլէֆոն 4—21.
Ընդունելութիւն թէ կանացի և թէ մանրիճ, նոյնպէս և վիրաբուժական կարիք ունեցող մնայուն ստացիոնարն հիւանդների (բացի վարակիչ և հոգեկան հիւանդութիւններից), գաղտօրէն գրվելու պայմանով:
Ընդունելութիւն կանացի, մանրիճ և մանկական հիւանդութիւն ունեցող երեխեկ հիւանդների, ամեն օր՝ ցերեկ. ժամը 11-ից մինչև 12-ը:
Ընդունելութիւն պրոֆ. Մ. Ս. Սուրբօտինի կողմից վիրաբուժ. կարիք ունեցող հիւանդների. գաղտօրէն գրվելու պայմանով, երկուշաբթի և հինգշաբթի օրերը ցերեկ. ժամը 1—2-ը:
Հիւանդանոցի բժիշկները
Ա. Ա. Յարութիւնեան, Ն. Ն. Վասիլչզօրով, Վ. Ա. Զակրժէվսկի, Ի. Գ. Կալամկարեան, Ա. Ա. Սօսիցկիյ, Գ. Ն. Տէր-Ներսէսեան, Ն. Զ. Ռամիկեան, Ա. Ռ. Փիշէր, Մ. Գ. Շահպարոնեանց։ Կանանաբոյժ՝ պրոֆեսոր Մ. Ս. Սուրբօտին
(Հ.կ.) առ. 579. 160—75

ՀԱՐԻՒՐ ՅԻՍՈՒՆ ՄԻԼԻՈՆ

Մի խոշոր պետական գումար է նըշանակված տնտեսական բարեւորութիւնների համար:

Ամբողջ հարիւր յիսուն միլիոն ռուբլի:

Գումարը նշանակված է Պետական Դումայի հաւանութեամբ և նախաձեռնութեամբ:

Այդ գումարը կը գործադրվի հինգ տարվայ ընթացքում հողային բարեքաջութիւնը իրականացնելու նպատակով:

Այդ խոշոր ձեռնարկութիւնը ծրագրված է Ռամանովների Տան յօբելեանի տրիթով և պէտք է շարունակվի նաև հինգ տարին անցնելուց յետոյ աւելի ևս լայն կազմակերպութեամբ և ծաւալով, որովհետև դիտաւորութիւն կայ հողային և առ հասարակ տնտեսական բարեւորութիւնների «Ռամանովեան» գումարի քանակը հասցնել մինչև երկու և կէս միլիարդ ռուբլու:

Հոյակապ այդ գործի ծրագրողները դիտաւորութիւն ունեն պետական մեծ ծախսարարութեամբ նպաստել, որ ապարդիւն և ամայի մնացած հողերը վերածվեն արգաւանդ անպատանների:

Այդպիսի մի նպատակի հասնելու համար հարկաւոր կը գայ մի տեղ ռազմական կազմակերպել, միւս տեղ ճանհիճներ ցամաքեցնել, երրորդ տեղ հողերը մաքրել զանազան վնասաբեր տարրերից, օրինակ՝ քարերից, ժայռերից, մի չորրորդ տեղ համակարգված մաքառում մղել արտերին, դաշտերին և այդիներին վնասող հիւանդութիւնների և ազդեցութիւնների դէմ:

Եւ որպէս զի հնարաւոր լինի բարեւորման այդ խոշոր գործի իրականացումը աջող կերպով առաջ տանել՝ անհրաժեշտ է լուրջ ուսումնասիրութիւն և մշակումն այն բոլոր խնդիրների, որոնք կարող են նպաստել բարեւորման գործը լիակատար կերպով կազմակերպելու:

Եւ ահա այդ նպատակով ծրագրված է Անդրկովկասում մի յատուկ համագումար, որը պէտք է քննի խոշոր այդ խնդրի տեղական առանձնայատկութիւնները մեր երկրի պայմանների և պահանջների համաձայն:

Համագումարը տեղի կունենայ եկող տարի ապրիլի վերջին կամ մայիսի սկզբին:

Ներկայումս Թիֆլիսում տեղի ունեն խորհրդակցութիւններ այդ համագումարի նպատակայարմար կազմակերպութեան մասին, և անշուշտ ցանկալի է, որ թէ մամուլը և թէ հասարակութեան մտածող մասը նպաստեն, որ համագումարի քննութեան համար ներկայացվեն լաւ ուսումնասիրված նիւթեր, որպէս զի համագումարը կարողանայ ճշգրիտ եզրակացութիւններ դուրս բերել տնտեսական բարեւորման միջոցների և նրանց գործադրութեան եղանակի մասին:

Մի ուրիշ անգամ մենք կանգ կառնենք այդ բարեւորումների կամ մեկիսաբացիայի կարևորագոյն խնդիրների վրա և կը զարգենք թէ ինչ կարելի է իրականացնել պետական և ուրիշ հասարակական գումարներով:

Ա. Քալանթար

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Կ. Պոլիս,—Հայոց պատրիարքական փոխանորդ է ընտրված Գաբրիել եպիսկոպոս Ճէվահիրճեան: (Հ. Գ.)

Մեծ պետութիւնների Կ. Պոլսի դեսպանական այն յանձնաժողովը, որ զբաղվում էր հայկական խնդրով, իր զեկուցումները աւարտել է յուլիսի 10-ին:

Դեսպանական յանձնաժողովը նկատի է առել ռուսական դեսպանատան առաջին թարգման Մանդելշտամի՝ հայկական բարեւորագումների համար պատրաստած ծրագիրը և կարևոր փոփոխութիւններով ընդունել է այն:

Դեսպանական յանձնաժողովի անդամները յուլիսի 13-ին իրանց աշխատութիւնների տեղեկագիրը ներկայացրել են իրանց դեսպանութիւններին:

«L'Homme Libre» թերթի Կ. Պոլսի թղթակիցը յուլիսի 18-ից (Ն. տ.) հեռագրել է իր թերթին, թէ օսմ. կառավարութիւնը պահանջել է մեծ պետութիւնների Կ. Պոլսի դեսպաններից, որ հայկական նահանգների բարեւորագումների համար կազմված յանձնաժողովը իր խորհրդակցութեան որպէս հիմք ընդունէ այն ծրագիրը, որ պատրաստված է Բ. Դրան կողմից:

Այդ հեռագրի առիթով՝ Պոլսոյ Նուպար փաշան յիշեալ թերթի խմբագրութեանն է ուղարկել մի նամակ, որի թարգմանութիւնը լոյս կընծայենք «Մշակի» հետեւեալ համարում: Նուպար փաշան իր այդ նամակում, ի միջի այլոց, դարձեալ շեշտում է կօնտրոլի և ընդհանուր քննիչի անհրաժեշտութիւնները հայկական նահանգների վարչական վերակազմութեան խնդրում:

—

Մալգարայից ստացված նորագոյն տեղեկութիւններից երևում է, որ այդ քաղաքում հայերի դէմ սկված ցոյցի հետեանքն եղել է շուկայի թալանը և մօտ 125 շէնքերի հրկիզումն: Սպանված են մօտ տասն հայեր, բռնաբարվել են երկու հայ դեռատի քոյրեր, որոնք յետոյ վիրաւորվել են ամբոխի ձեռքով: Քաղաքի շրջակայ գիւղերը, որոնք մեծ մասամբ յունաբնակ են, կործանվել ու թալանվել են: Մալգարայում յոյները դերձ են մնացել թէ կեանքի և թէ ինչքի վնասից:

ԱՐՇԱՐՈՒՆԻ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԸ

Կ. Պոլսից ստացված նորագոյն տեղեկութիւնները հաղորդում են, որ Արշարունի պատրիարքը իր հրաժարականն է ներկայացրել թէ ազգ. ժողովին և թէ օսմ. կառավարութեանը:

Ազգ. ժողովը, յուլիսի 19-ի իր նիստում զբաղվելով այդ հարցով, ընդունել է պատրիարքի հրաժարականը: Իսկ օսմ. կառավարութիւնը, որին ներկայացրել էր իր հրաժարագիրը Արշարունի արքեպ. դեռ յուլիսի 18-ին, մինչև յուլիսի 20-ի կէսօրը որևէ պատասխան չէր տուել նորին ամենապատուութեան հրաժարականն ընդունելու կամ չընդունելու մասին:

Ահա պատճէնն այն հրաժարագրի, որ պատրիարքը մատուցել է ազգ. ժողովին.

Վսեմաշուք ատենապետ էֆ.

Ազգային պատկ. ժողովին.

Ազգ. երեսփ. ժողովին քաւէորն ու սամանագրական օրինաց համաձայն կոչուելս ցայ յաթոռ պատրիարքութեան Կ. Պոլսոյ:

Ցօրէ անտի և այսր գործեցի սահմանադրութեան վրայ կատարած ուխտս հետեւելով և աշխատեցայ յարաբերական գործերը վարել, որչափ կարելի էր արդիւնաւորապէս, պաշտպանեցի ազգիս օրգու

տանում, առաջօրէն երևակայել չի լինի։ Դեռ կարելիութիւնները մի կողմ թողած, դրութիւնն Հայաստանում այսօր այնքան վատ է, որքան երբեմն IX և X դարի մեծ ջարդերից այս կողմ։ Այդ պատճառով հայերի արտագաղթը Թիւրքիայից աւելի ու աւելի մեծ չափեր է առնում։ Պաշտօնական մի հաղորդագրութեան նայելով՝ այս տարվայ փետրվարից իբր 1500 հոգի միայն Խարբերդից են Ամերիկա գնացել, և Էրզրումի պաշտօնատները օրական 100 խնդիր են մտնում արտասահմանեան անցագրի համար։ Շուկան լիքն է մնային կահ ու կարասիքներով, որոնք ծախու են հանվում օտարութիւն գնացողների կողմից։ Սպանութիւն և յափշտակութիւն շարունակում են իրանց գործը։ Մանաւոր լուրերն այդ մասին մի անվերջ շարան են առաջ բերում»։

Այդտեղ Ռօհրբախը թարգմում է այլևայլ տեղերում կատարված սպանութիւնների մի շարք և այլն, որ մենք զանց ենք անում մէջ բերել՝ հայ ընթերցողին ծանօթ լինելով հայկական աղբիւրներից։ Ապա նա շարունակում է.

«Հէնց որ Զարսանջակի թիւրք կայմակամը քիւրդերի յափշտակած հողերից մի քանիսը վերադարձնել տալ ուզեց իրանց տէրերին, նրա պաշտօնարանական շէնքերը պաշարվեցին 24 քիւրդ գլխաւորներից։ Զը նայած դրան՝ կայմակամն ուզեց ազդու միջոցներ ձեռք առնել, բայց իր մարդիկ շատ անզօր և շատ էլ անվստահելի էին։ Կառավարութիւնն էլ նրան տեղափոխեց, և ամեն ինչ դարձեալ մնաց ինչպէս կար։ Նման դէպքեր ամեն տեղ»։

—

Եթէ այդպէս չը լինէր, հայերը, օսմանեան հպատակների մէջ ամենից խաղաղները, աշխատասէրները, հաւատարմաբար ծառայողները, երբէք զանգատաւոր չէին լինի կառավարութիւնից։ Եթէ կառավարութիւնը միայն անկարող կամ թոյլ լինէր վատաւոր ժողովրդի վրա կատարվող անիրաւութիւններն ու բռնութիւնները զսպելու համար, հայը նրանից զանգատաւոր չէր լինի ոչ նրա և ոչ էլ, անճարացած, օտարի առաջ։ Եթէ մի արդար կառավարութիւն, ոչ բաւական զօրաւոր գրանելով իրան աւազակաբարոյ և աւերիչ տարրերի չարագործութիւնները, երկրի խաղաղ, շինարար և ամեն կերպով արդիւնաբեր ժողովրդի դէմ գործվող, խափանելու, այդ իսկ ժողովրդին հրաւէր կարդար իրան ազակել չարագործութիւնը կարճելու, հայը ոչ միայն զանգատաւոր չէր լինի նրանից, այլ և իրան երախտապարտ կը ճանաչէր այդ բարի կամեցողութեան համար և ամենայն աջողութեամբ կարող կը լինէր պինդ դնչկալ դնել արիւնարբու կողմերին։ Բայց երբ մի կառավարութիւն, եւրոպացիներիդ իսկ խոստովանութեամբ, իր հաղորդիւտ մի պաշտօնեային, որ կամք է ցոյց տալիս զրկանքը զրկողից զրկվածին վերադարձնելու, պաշտօնազուրկ է անում կամ տեղափոխում, այդ դէպքում զրկվածը հայը բողոքում է ուր որ յոյս է տածում՝ թէ պաշտպանութիւն կը գտնի։

Արդ՝ Եւրոպան, որ իր հզօր պետութիւններով իրաւարարութեան աշխարհամասը առեան է կազմում և այնտեղ է անօրինում ժողովուրդների, ազգերի բաղդը, արդեօք պիտի լսէ վերջապէս բողոքը վատաւոր հին ազգերից մէկի, որի ծառայութիւնը քաղաքակրթութեան՝ և ամեն ժամանակ մատուցած ծառայութիւնը Եւրոպային Արևելքում՝ արհամարհելիներից չէ եղել և չէ այսօր էլ։

Մենք յոյս ենք տածում, թէ նա վերջապէս կը լսէ, եթէ Ռօհրբախները չը դադրեն հայկական խնդիրը ուղիղ լուսաւորելու և եւրոպական հասարակական կարծիքը ի նպաստ այդ խնդրին պատրաստելու։

Հայ

ԴՈԿՏ. ԼԷՓՍԻՈՒՍ ԵՒ ԳԵՐՄԱՆՔ Ի ՓՈՔՐ ԱՍԻԱ

—

Եդեսիա, 27 յունիս

Ամսիս 18-ին ժամանեց ծանօթ գերման գիտնական դոկտ. Յովհաննէս Լէփսիուս։ Երրորդ անգամն է, որ կայցելէ Եդեսիա, ուր Գերման-Արեւելեան Միսիոնի անունով հիմնադիրն եղած է մարդասիրական հաստատութիւններու—որբանոց, հիւանդանոց, գորգի գործարան, և այլն։

Դոկտ. Յ. Լէփսիուս այս անգամ ևս կուգար այցելելու այս մարդասիրական հաստատութիւնները, որոնք հարկաւ Բաղդադի երկաթուղիի գծին վրայ գերմանական աղդեցութեան ծաւալումին օժանդակող միջոցներ են, ինչպէս հայաբնակ Եդեսիոյ մասին վերջերս մամանցոյց կընէր պ. Էվալդ Շեֆր՝ գերման «Դի-Հիլֆէ» կրօնական շաբաթաթերթին մէջ։

Իր հասած օրը առաջնորդ հօր գլխաւորութեամբ հայ պատգամաւորութիւն մը, որուն կանգամակցէինք, կերթայ երախտագիտօրէն ողջունել գալուստը մարդասէրին, որուն հիմնած հաստատութիւններէն մեր ազգայիններն են—այրի, որբ, աղքատ—որ կօգտուին ամենամեծ համեմատութեամբ։

Դոկտ. Լէփսիուս հաճոյքով ու մեծ աղնութեամբ կընդունի հայ պատգամաւորութիւնը, որ յանուն եդեսաբնակ հայոց անոր կը յանձնէ շնորհակալեաց գրութիւն մը՝ գնահատող ծանօթ հայանպաստ աշխատութիւնները։

Դոկտորը, որուն հետ տեսնուելու պատիւն ու հաճոյքն ունեցած ենք իր առջի երկու այցելութեանց միջոցին ալ. տարիքով քիչ մը առաջացած կերևի, բայց իր խանդէն ու կորովէն բան մը պակսած չէ. հազիւ 55—60 տարիքաւորի մը երևոյթ։ Ցիշեց այն տեսակցութիւնները, զորս Կ. Պոլսոյ մէջ ունեցած է Արշարունի և Օրմանեան սրբազաններուն հետ։ Իր խօսակցութիւնները անգամ մըն ալ կը ներշնչեն մեզի թէ ինք մեր ցեղին կրած աղէտներուն կարեկից ու մխիթարիչ ատեն Ասիական Թիւրքիոյ օսմ. գոյութեանը պահպանումին անկեղծ ջատագով մըն է։ Կը յայտնէ, թէ Անգլիա ու Գերմանիա նոյն գաղափարը կը պաշտպանեն՝ մղուած իրենց շահերէն, որոնք համաձայն կուգան Ասիական Թիւրքիոյ յարատեւութեան։ «Գերմանիա համոզուելով հայ տարրին օգտակարութեան՝ իր նախկին քաղաքականութիւնը փոխած է։ Բերլինի մէջ կազմուած է կոմիտէ մը՝ ծանօթ գործիչի մը նախագահութեամբ, ու գերման կառավարական շրջանակներն ու մամուլը կը շահագրգռուին արևելեան գաւառներու վիճակով»։

Կուզեմ օգտուիլ դոկտորին պատրաստակամութենէն ու քանի մը հարցումներ կընեմ անոր.

— Երբ արևելեան նահանգներու մասին Ռուսիոյ բուն դիտումն յայտնի է, ինչպէս պէտք է մեկնել ռուս օրգաններու, օրինակի համար՝ «Новое Время»-ի, փրոփագանդը՝ թէ պէտք է բարեկարգել եւրոպական քննիչով։

— Այն յուսով, որ հաւանօրէն գործադրութեան հակողութիւնը դրացի պետութեան կընայ տրուիլ։

— Եւ եթէ այս հաշուին մէջ յուսախաբ ելլան ռուսերը, վախ կա՞յ որ 1895-ի քաղաքականութեան հետևին։

— Քանի մը պատճառներով իրաւունք ունինք հաւատալու, թէ ժամանակը նոյնը չէ. ռուսական անցեալ քաղաքականութեան գաղտնիքները պարզուած են և ուրիշ շահակից պետութիւններ նոյն նահանգներու մասին իրենց քաղաքականութիւնը ճշդած։

— Խօսելով Հակէը փաշայի Լոնդոնի պատգամաւորութեանը մասին՝ քանի մը թերթեր մտքերու մէջ կասկածներ արթնցուցին, թէ փաշան մասնաւոր պաշտօն մըն ալ ունեցած ըլլայ Անգլիոյ միտքը հաճեցնելու՝ որ բարենորոգումներու խնդիրն ստիպումներ չելլան ու գործադրութիւնը օսմ. կառավարութեան թողուի։ Եթէ իրաւ է, կը կարծէք որ Անգլիա մատուցումներէն ազդուած՝ Ասիական Թիւրքիոյ ամրապնդման աւինէն ապահով ճամբէն շեղի։

— Իրաւ որ սակարկութիւն մը եղաւ Քօվէյթի կողմերը, ու Անգլիան վերջնականապէս չէ ճշդած իր դիրքը, ուրիշ կարելի ելլար հետևցնել, թէ «անցած-դարձածը» ինչ հետևանք առաջ բերած է նոյն խնդրին համար։ Բայց տարակոյս չկայ, որ օսմ. թեարկութեան տակ իրապէս բարեկարգեալ երկիր մը Անգլիոյ համար ալ ամենէն օգտակարն է։ Անգլիա մինչև բալկանեան պատերազմին վերջը՝ գործեց երբեակ համաձայնութեան պետութեանց՝ Ռուսիոյ և Ֆրանսայի հետ։ Բայց այժմ արևելեան նահանգներու մասին կուզէ գործել Գերմանիոյ հետ, որ նոյն բանին կը փափաքի—իրական բարենորոգում—իր Բաղդադի գծին ապահով շահագործութեանը համար, առանց տեղի թողու կասկածուած արտաքին միջամտութեան։

— Ռուսիա այս պահուն որ ատիճան հակամէտ է այդպիսի ձեռնարկի մը։

— Հոն երկու կարծիք կայ. պաշտօնական շրջանակները կը հակնան, որ միւս պետութիւնները չեն ուզեր թոյլատու դտնուիլ ռուսական մտասևեռումին—Մերսին հանելով բաց ծով ելնելու բաղձանքին—որով զգոյշ են ու Եւրոպայի հետ գործել կուզեն։ Բայց անպաշտօն շրջանակներ բարակը չեն խորշիր, աւանդական ըղձանքներէ կառաջնորդուին առաւելապէս»։

— Կարելի է յուսալ, որ Ռուսիա օր մը հրաժարի այս երազներէն։

— Դժուար, որովհետև ռուսերն ամեն պատեհութենէ օգտուիլ ուզելով՝ աւեն մի-ջոց պիտի փորձեն։ Հիմա կը լսուի, թէ քիւրդ ցեղապետներու հետ յարաբերութիւն կը մշակեն, օր մը այդ ծանօթ տարրին մէկ շարժումէն օգտուելու համար։

— Եթէ դժբաղդաբար այդ տեսակ պարագայ մը ներկայանայ և Ռուսիա ոտնձգութիւն ընէ, բայց առանց Միջագետքի կողմը դիմելու, Գերմանիա վտանգուած պիտի համարի Բաղդադի գծին ապահովութիւնը։

— Երբ բացատրանի մը բերդիրը դրաւուին, շուրջի կամ յարակից հողերն ալ ամրոցներուն տիրողինն են։ Գերմանիա Արևելեան Նահանգները կը նկատէ զսպանակն այն երկրամասին, որուն մէջէն պիտի սուրայ Բաղդադի շոգեկառքը։

— Այս պահուն ինչ է յարաբերական վիճակը բարենորոգման խնդրին։

— Ռուսիոյ առաջարկութեամբ, Կ. Պոլսոյ դեսպանական մարմինը հրաւիրուած է զբաղիլ բարենորոգմանց ծրագրով։ Այս ձեռնարկը ունի իր հետաքրքրական կողմերը։ Պէտք է ուշի ուշով հետևիլ անոր և սպասել արդիւնքին։

(«Բիւզանդիոն») Գ. Կ. Ռ.

ԲԱԼԿԱՆԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

ԲԱԼԿԱՆԵԱՆ ԲԵՄԻ ՎՐԱ

—

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

26 յունիսի

Կ. Պոլիս. — Մեծ պետութիւնների դեսպանները բանաւոր առաջադրութիւն արին մեծ վեզիրին Ադրիանուպոլսի հարցի առիթով, առաջարկելով յարգել Լոնդոնի դաշնագրի սկզբունքը, գլխաւորապէս Էնոս-Միդիա գծի վերաբերմամբ։ Առաջադրութիւնը վերջանում է յայտարարութեամբ, որ պետութիւնները պատրաստ են նկատի առնել սահմանների փոփոխութիւնը այն պայմաններով, որպիսին օսմանեան կառավարութիւնը անհրաժեշտ է համարում։ Դրանից յետոյ մեծ վեզիրը Բ. Դրան մէջ մինիստրներին խորհրդակցութեան հրաւիրեց։

—

Կ. Պոլիս.—15,000 զինուոր զբաղված են Ադրիանուպոլսի շուրջը ամրութիւններ շինելով, մանաւանդ Կրեք-Քիլիսէում, որը մնացել էր բոլորովին անպաշտպան։ Ադրիանուպոլսի կոմենդանտ է նշանակված Էնվէր-բէյը։ Թրակիա են ուղարկվում անընդհատ ռազմամթերքներ, զէնք և ուտեստի պաշարներ։ Առևտրականներին հրաւէր են կարդում Ադրիանուպոլիս ուղարկել դանդան ապրանքներ, մանաւանդ աւիւր, իւղ և կօշնիալ ապրանքներ։ Թրակիայից եկած փախստական քրիստոնեաները քստմնելի մանրամասնութիւններ են պատմում թիւրքական զօրքերի Թրակիայում գործած գազանութիւնների մասին։ Կառավարութիւնը, նախատեսելով այն վրդովմունքը, որ կարող են առաջ բերել այդ լուրերը սիեզերական պատրիարքի մէջ, աշխատում է համոզել պատրիարքին, որպէսզի նա այդ առիթով չը բողոքի մեծ պետութիւններին։ Ներքին գործերի մինիստր Թալէաթ-բէյը այդ նպատակով հաւատացրեց պատրիարքին, որ Թրակիայի թիւրք իշխանութիւններին խստիւ հրամայված է պաշտպանել քրիստոնեայ ազգաբնակութիւնը։ Ստացված տեղեկութիւնների համաձայն, Մուստաֆա փաշայում թիւրքերը հիմնովին քանդել են կաթոլիկների կանանց վանքը։

—

Բուխարեստ.— Խաղաղարար կոնֆերէնցիայի երկրորդ նիստին, ցերեկը, յոյները, բոլգարները և սերբերը ներկայացրին զրաւոր յայտարարութիւն կայացրած համաձայնութեան մասին սահմանների վերաբերմամբ։ Նախագահը նշանակեց յաջորդ նիստը միւս օրը ժամը 4-ին, ցանկութիւն յայտնելով, որ նա լինի վերջինը կամ նախավերջինը։

—

Սոֆիա.—Բոլգարական կառավարութիւնը յայտագիր ներկայացրեց մեծ պետութիւնների ներկայացուցիչներին, յայտարարելով որ Բուխարեստ ուղարկված իր պատգամաւորներին հրահանգներ է տուել ստորագրելու նախնական հաշտութեան դաշնագիրը։ Կամենալով միաժամանակ նոր ապացոյցներ տալ իր խաղաղասիրութեան, դաշնագիրը ստորագրելուց անմիջապէս յետոյ կարգադրեց զէնքի կանչված զօրքերը արձակել տները, չը նայելով որ Թիւրքիայի զօրքերը աւելի քան երբ և իցէ այժմ սպառնում են խուժել Բոլգարիա։ Այդ որոշումը Բոլգարիան կայացրել է այն խորը համոզմամբ, որ մեծ պետութիւնները կարող են ստիպել Թիւրքիային յարգելու Լոնդոնի դաշնագիրը և կը դիմեն իրանց արամադրութեան ներքոյ եղած բոլոր միջոցներին՝ արգելելու թիւրքական առաջխաղացութիւնը, որի խուժումը Բոլգարիա կարող էր արհաւիրք ու աւերած սփռել։

—

Բելգրադ.—Հաշտութեան լուրը ցընծութիւն է առաջացրել սերբական շրջաններում, մանաւանդ Սերբիայի և Բոլգարիայի անմիջական բանակցութեան առիթով։ Կարծում են, որ դա բարենպաստ գործօն է ապագայ սերբ-բոլգարական յարաբերութիւնների համար։

—

Լոնդոն.—«Վեստմինիստեր Գազէթը» խօսելով Բուխարեստի դաշնագրի մասին, պախարակում է Սերբիայի և Յունաստանի անմիտ եսականութիւնը, որի ոյժով Բոլգարիան, Թիւրքիայի դէմ մղած պատերազմի զեկավարը, համաբեռ զրկված է իր նուաճած նահանգներից։ Այդպիսի պայմաններում խաղաղութիւնը տեսակն լինել չէ կարող։ Միակ յոյսը դաշնագրի փոփոխելն է պետութիւնների կողմից, բայց այդ հնարաւոր է այն դէպքում միայն, եթէ Ռուսաստանն ու Աւստրիան արդարև համաձայնութեան գան։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

26 յունիսի

Բագու.—16 ֆիրմաների 6,000-ից աւելի բանուորները տնտեսական պահանջներ առաջադրեցին։ Գործադուլեն արել 5 ֆիրմաների 600 բանուորներ։

—

Լօձ.— Բօզէնբլատի մանուֆակտուրային գործարանի 2,600 բանուորները վերսկսեցին աշխատանքները նախկին պայմաններով։

—

Բարցելօնա.—Կատալոնեան բանուորների միութիւնը ընդհանուր գործադուլ յայտարարեց։ Կալանաւորված են շատ սինդիկալիստներ։ Պաշարողական դրութիւն է յայտարարված։

—

Բարցելօնա.—Ոստիկանութիւնը կալանաւորել է 23 գործադուլարարներ և 18 անարխիստներ։ Նահանգապետը հրաման է տուել փակելու բանուորների տեղական միութիւնը։ Գործադուլարարները բռնի ոյժով հեռացրին էլեքտրական կայարանից աշխատող բանուորներին։

—

Բուդապէշտ.—Զինուորական դատարանը արդար ճանաչեց պարլամենտական պահակախմբի կապիտան Դէգէին, որ պատասում տեղի ունեցած անկարգութիւնների միջոցին սրով մի քանի հարուածներ էր տուել պատգամաւոր Խէդէրվարիին։

—

Լիմա. — Պէրուում երկրաշարժից փլատակվել են Կարաբիլին և Կվիկաչուն։ Հաղարաւոր ընակիչներ մնացել են անօթևան։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

—

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

26 յունիսի

Թաւրիզ.—Խիստ հրաման է ստացված պատրաստվել մէջլիսի ընտրութիւններ կատարելու։ Ազգաբնակութիւնը վերաբերվում է անտարբեր։ Բամազանի առիթով մզկիթներում ճառախօսները մատնանշում են ընտրութիւնների ապարդիւնութիւնը, ասելով որ առաջին երկու մէջլիսները անօգուտ անցան։

Ռուսական ֆիրմաների ներկայացուցիչները կառավարութիւնից գնած հողի վրա սկսեցին շինել իշխանատեղի ապրանքների պահեստի համար։

—

Թէհրան.—Յուլիսի 25-ին ցերեկով հրացանաձգութիւն սկսվեց ժանդարմների և բախտիարների միջև 3 ժամ տևողութեամբ։ Երբ ժանդարմները կենտրոնանալով, նպաստաւոր դիրքեր գրաւեցին, գլխաւոր հրահանգչի օգնական շվեդական մայոր Գիլմստէդը, գնալով բախտիարների պետի տունը, յայտնեց ուլտիմատում՝ անմիջապէս զինաթափ անել բախտիարներին, սպառնալով հակառակ դէպքում դիմել թնդանօթաձգութեան և գնդակցիրների օգնութեան։ Հրացանաձգութիւնը դադարեց։ Բախտիարները պարտաւորվեցին զինված չերևալ փողոցներում։ Հրացանաձգութեան ժամանակ թեթև վերք է ստացել շվեդական կապիտան Պուսսեարը, սպանված են 3 հոգի և վիրաւորված 4 ժանդարմ։ Բախտիարների կողմից սպանված են ու վիրաւորված մօտ 40 հոգի։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—

ԱՆՄԽԻԹԱՐ ԵՐԵՒՈՅԹ

—

Ամենքը վկայում են, որ այժմեան մատաղ սերունդը, ընդհանուր առմամբ, մատաւոր-բարոյականի տեսակէտից գտնվում է ոչ մխիթարական վիճակի մէջ։ Սրա պատճառը անշուշտ մեր հասարակութեան ապականված բարքերը և մանաւանդ դպրոցներում գոյութիւն ունեցող յոռի դաստիարակչական հակացողութիւններն են։

Վերջերս մեր դպրոցական ասպարէզում նկատվում է մի տեսակ «առաջադիմական շարժում»։ Սակայն զննող աչքի համար այդ շարժումը ոչ թէ առաջադիմական է, այլ յետադիմական և կործանարար։

Փաստե՞ր էք ուզում. դրանք շատ կան։

Նախ մօտեցէք այդ սերնդին՝ մեր ապագայ հասարակական «գործիչներին» ու «ուսուցիչներին» և դուք կը համոզվէք իմ ասածներիս մէջ։ Բայց իբրև իլլուստրացիա իմ ասածների յիշեմ մի թարմ և իւրատեսակ քստմնելի դէպք, որը առիթ է տուել տողերիս գրելուն։

Անցեալ երեկոյեան Երևանեան հրապարակում այս տարվայ ներսիսեանաւարտների մի խմբակ, գլուխ ունենալով իրանցից մէկին — ֆիզիքական ամենակոպիտ յարձակման ենթարկեց հէնց իրանց հետաւարտած մի ընկերոջ։ Այդ խմբակը նախապէս որոշած է լինում «յարմար մոմենտն ծեծել» վերջինին, որովհետև սա իրանց հետ համագաղափարակից չէ, որովհետև նա դպրոցում թէ ուսուցիչներից և թէ գիտակից ընկերներից ճանաչված է եղել որպէս լուրջ և համեստ մի անձնաւորութիւն։

Եւ ահա այդպիսի մի անձնաւորութիւն դուրս չէ գալիս մեր խմբակին, որը ուզում է «խրատել» նրան։ Եւ. ահա այդ երեկոյեան, երբ նա անցնում էր վերոյիշեալ խմբակի մօտով, սրա խմբապետը կանգնեցնում է նրան և կոպիտ կերպով հարցնում, թէ ինչու իրան չէ բարևում։ Նա յայտնում է, որ չէ նկատել նրան, և ուզում է անցնել. բայց խմբակի հերոսը աւելի ուժեղ և յաղթանդամ լինելով՝ ամուր բռնում է նրա ձեռքից և սկսում ոտքերով հարուածել։ Սա աշխատում է ազատվել գազազածի ձեռքից, բայց վերջինս մի ուժգին հարուած է հասցնում նրա աջ աչքին... Իսկ սխրագործի միւս ընկերները մի քիչ հեռու կանգնած հռհռում ու հրճվում են, որ կարողացան վերջապէս իրանց նպատակին հասնել։ Մի քանի հոգի մէջ են ընկնում և ծեծվողին ազատում նրա ձեռքից։

Հաւաքված ամբոխը դժգոհութեամբ իմացաւ, որ սրանք Ներսիսեան դպրոցի նոր-աւարտներն են։

Ծեծվողի պահանջմամբ նրանք առաջնորդվեցին ոստիկանատուն։ Այնտեղ կազմվում է արձանագրութիւն. և երբ ոստիկանատան պաշտօնեաներն իմանում են, որ ծեծողն էլ շրջանաւարտ է և ուզում է ուսուցիչ դառնալ, նրան պախարակում են, թէ ապագայ ուսուցիչը ինչպէս է թոյլ տալիս իրան այդպիսի կոպիտ ու վայրենի վարմունք։

Թէ ինչպէս են ազդում «իգիթի» վրա այդ նկատողութիւնները, ես չը գիտեմ. միայն ասեմ, որ կօմիտէյի վերջին գործողութիւնը պիտի կատարվի դատարանում, և այնտեղ ևս պիտի իմանան, որ մեր պարծանք Ներսիսեան դպրոցը դեռ շատ ու շատ այդպիսի «իգիթներ» և «ուսուցիչներ» է տալու հայ ազգին... Իրակէ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

—

Սեւաշի զոհը

Նոր-Բայազէտ, 23 յուլիսի

Վարդավառի առնի օրը մեզանում —վրութիւն կայ ուխտ գնալ Սեւանի վանքը, ուր 2—3 օր քէֆով և ուրախութիւնով են անցկացնում ուխտաւորները։

Այս տարի նոյնպէս մեծ թւով ուխտաւորներ էին լցվել այդ անապատը։

Սակայն Սեւանը իր «մատաղացու» զոհերի հետ միասին այս տարի (յուլիսի 21-ին) ունեցաւ նաև իր «մարդկային զոհը»...

Նոր-բայազէտցի մի երիտասարդ—Խաչատուր Սայադեանց—լողանալով Սեւանի ծովակում, վանքից ոչ հեռու մի սաժենաչափ խորութեամբ տեղում խորասուզվում է ու խեղդվում։ Դիակը մի քանի բօպէից յետոյ հանելով Ջրից՝ այլևս անկարելի է լինում նրան փրկել մահից։ Խեղճը միջին դասակարգի ընտանիքի զաւակ էր և ծաղիկ հասակում (25 տարեկան) զոհ գնաց պատմական հինաւուրց Սեւանին, որի պատմութիւնը գրեթէ անթիւ զոհերով է նկարագրված։

Ասում են՝ դժբաղդ Խաչատուրը բաւական արբած էր և հէնց քէֆի միջից իրան ջուրն էր նետել ու ալիքների հետ կռուելով՝ Սեւանի ծովակի խորխորատներին զոհ գնացել... Այդ դէպքը շատ ծանր տպաւորութիւն է թողել վանքում, ուր ուխտաւորների ուրախութիւնը բոլորովին տրտմութեան է փոխվել։ Միւս օրը հանգուցեալի մարմինը բերելով Նոր-Բայազէտ թաղեցին հասարակական գերեզմանոցում։ Զը մոռանամ յիշել, որ Սեւանը այս ուխտագրութեան միջոցին յաճախ իր մարդկային զոհն է ունեցել անցեալներում։ Ս. Ե. Ա.

—

Դաղափարական բժիշկը

Խանքենդ, 18 յուլիսի

Երկար ժամանակ Խանքենդը մնաց առանց բժշկի։ Ոչ ոք չը մտածեց ընդ առաջ գնալ ժողովրդի անհրաժեշտ կարիքին և, եթէ աւելին չէ, գոնէ մի հասարակ ֆելդշերական պունկտ հիմնել տեղս։ Աղքատ հիւանդը մնաց իր անկողնու տակ հիւանդութեան ճիրաններում հիւծվելիս, հնարաւորութիւն չունենալով գնալ քաղաք բժշկվելու. իսկ ունևորն էլ անապին ծախքերի տակ ընկնելով և հիւանդին քաղաք հասցնելով, դարձեալ, զանազան անյարմարութիւնների շնորհիւ, ոչինչ չէր շահվում։

Այսպէս անխնայաբար դրութեան մէջ էինք ապրում, երբ, սրանից մօտ մի ամիս առաջ, մեզ մօտ եկաւ բժիշկ Աւետիսեանը։

Զգալով շրջապատի կարիքը, տեսնելով հիւանդների անմխիթար դրութիւնը, բժ. Աւետիսեանը ի գործ դրեց իր մասնագիտութիւնը, և այդ՝ ոչ վարձատրութեամբ, այլ ձրիաբար, առանց ընդունելու իր պացիէնտի վարձատրութիւնը։

Եւ շնորհիւ պարոնի լրացաւ այնքան կարևոր բացը։

Տեղիս հասարակութիւնը անխտիր երախտապարտ է բժ. Աւետիսեանին՝ նրա մատուցած գաղափարական ծառայութեան համար։ Ա. Աղանեան

—

Խօսք եւ գործ

Շնող գիւղ, 23 յուլիսի

Եղակի են այն դէպքերը, առաւել ևս հայ իրականութեան մէջ, երբ մարդիկ իրանց խրատն ու քարոզը նոյնութեամբ էլ գործադրում են կեանքում։

Եւ ահա այդպիսի մի եղակի դէպք։

Մի քանի օր սրանից առաջ կարդացի «Մշակում» իմ համագիւղացի Բ. Մ.-ի մի յօդուածը, ուր նա խօսելով վատ, վնասակար

ու աւելորդ սովորութիւնների մասին՝ ի միջի այլոց շատ իրաւացի շեշտում էր նաև քիւրեղ տալու սովորութեան վրա՝ իբրև տարածված չարիքի և փաստացի առաջ բերում դրանից և նման սովորութիւններից առաջացած չարիքը...։

Այդպէս էր գրում Բ. Մ.-ն դեռ շատ մօտ անցեալում... Դա՝ նրա խօսքն էր, որ հաճոյքով կարդացինք... Այդպէս էլ գործում է նա այսօր... Դա էլ նրա գործն է, որին ականատես ենք վշտալի սրտով։

Եկեղեցում, իր վաղամեռ կնոջ դագաղի առաջ, որ Թիֆլիսից հէնց այսօր բերվեց, Բ. Մ.-ն խուռն բազմութեան առաջ յայտարարեց, որ քիւրեխի փոխարէն ինքը 50 ր. է նուիրում գիւղում գր.-ընթերցարան հիմնելու նպատակով։

Համեստ բանուորի կեանքի պայմաններին ծանօթ աչքեր ոք կիմանայ, թէ այդ նուիրաբերութիւնը որքան արժէքաւոր է։

Բ. Մ.-ի այդ քայլը որքան էլ արտասովոր էր գիւղացիների համար, այնու ամենայնիւ խոր տպաւորութիւն արեց գիւղացիների վրա, որոնք տարվայ այս օրերում, ինչպէս գիւղացիք իրանք են ասում, «փէտին փալա են փաթաթում, որ իրանց բանին շահ ըլի», բան ու գործը թողած՝ եկել էին իրանց անկեղծ ցաւակցութիւնը յայտնելու Բ. Մ.-ին՝ նրա վաղաժամ կնոջ՝ Մագթաղինէի մահվան առիթով, և կայարանից մինչև գիւղի եկեղեցին, մօտ վեց վերստ, դագաղը տարան ձեռքի վրա։

Ուշագրաւ էր այդ հանգամանքը, երբ մեր գիւղի չարքաշ շինականը, իր ամբողջ կղմով իր անպաճոյճ ու անկեղծ վշտակցութիւնն էր յայտնում այդպիսով այն մարդուն, որը իր կնոջ հետ ապրելով Թիֆլիսում՝ ոչ միայն չէ մոռացել իր համադիւղացիների ցաւերը, այլ և կենդանի նախաձեռնութեամբ ու գործով ընդառաջ է գնացել հարկ եղած դէպքում։ Ոքմին

ԿԵԱՆՔԻ ԲԱԳՐՈՒՄ

Բագու, 21 յուլիսի

Կեանքը մեզանում միանգամայն հանգիստ է. թէև վերջին ժամանակներս նաւթաշխարհում սկսվող մի քանի գործադուլները անհանգստութիւն առաջ բերին ինչպէս արդիւնաբերողների, նոյնպէս և բիրժայի շրջանակներում, բայց և այնպէս երկարատև լինել չէր կարող այդ։

Ուրախալի է յայտնել, որ «Կովկասեան ընկ.» նաւթահանքի լիաղօրները կարողացան հաշտվել բանւորների պահանջների մի շարք կէտերի հետ, և աշխատանքը վերսկսվեց։ Իսկ միւսները բանակցութիւնների մէջ են, և յոյս կայ, որ շուտով վերջանան։

Բացի արած գործադուլներից, պահանջներ են ներկայացված նաև մի շարք ֆիրմաներում, որոնք պատասխան դեռ չեն տուել, իսկ բանւորները աշխատում են ըստ պսակելով անտեսական բաւարարութեան։

Զուբալովի ֆիրմայի բանւորների պահանջները և գործադուլը անհանգստութիւն պատճառեցին, ի նկատի առնելով այն հանգամանքը, որ արհեստաւորներից ու բանւորներից մի քանիսը ոստիկանութեան ձեռքով բանտարկվեցին։

Ըստ երևոյթին գործադուլները զուտ անտեսական են և ոչ մի խլրատում չէ ըստպասվում։

* * *

Ամսիս 5-ից Բագուում եղանակները սկսել են զովանալ. շարունակ «խազրի» քամին կայ ու կայ. թէև երբեմն «գիլաւար» քամի էլ է փչում (ծովից), բայց այդ լինում է 3—4 օրը մի անգամ, այն էլ 1—2 ժամից աւելի չէ տևում։ Մի քանի անգամ երեկոները շատ թեթև անձրև եկաւ, որը շատ չը շարունակվեց դժբաղդաբար։

Հանքային ջրերից, Շուշուց և Շամախուց եկողների ասելով Բագուն աւելի հով է։

* * *

Ամսից աւելի է, որ լսում էինք, թէ Ղօզլու-Հայ ռուս աղանդաւորների (մօլոկանների) գիւղի մօտ (Շամախու գաւ.) մի ժայռ է ճեղքվել, որից ոչ մեծ քանակութեամբ թթու համ ունեցող ջուր է բղխում։ Պատմեցին, որ մի մօլոկան և մի թուրք հովիւ, որոնցից մէկը վերք է ունեցել երեսի վրա և երկար տարիներով չէ կարողացել բժշկվել, առաջին անգամ պատահելով նոր ջրին—որը տաք է լինում—սկսում է ձեռքերը լուանալ, ապա ոտքերը և երեսը։ Միւս օրը վերք ունեցող հովիւի հարազատները նկատում են, որ երեսի վերքը խիստ փոփոխութեանի ենթարկվել ու կարծես թէ բուժվելու վրա է։ Հովիւը լուացվում է երկրորդ և երրորդ օրը ու կատարեալ բժշկվում, վերքը անտեսանելի է դառնում։ Լուրը տարածվում է ամբողջ գաւառում, հաւաքվում.են վերք ունեցողները, ոսկրացաւով, աչքացաւով, բորոտ հիւանդները և, իբրև սրբատեղի, խմբերով գնում են դէպի ջուրը և լուացվում. շատերը լողանում են և համարեա բոլորն էլ բժշկվում։ Այդ ջրից թէ բաղուաբնակ հայերից և թէ թուրքերից բերել տուին. տեսայ և ես. համը նմանում է Ղարաբաղի թթու ջրի համին, բայց այդ ջուրը Ղարաբաղի ջրից թէ աւելի է թթու և թէ կծու։

Ներկայումս էլ օր չէ լինում, որ 40—50 մարդիկ փուրգօններով չը գնան այդ ջրում լողանալու։ Երկուշաբթի առաջ գնացել էի «Շամախու ճանապարհ» կոչված թաղը, տեսայ կանգնած մինչև հարիւր մարդիկ, մէկը ոտքից, միւսը ձեռքից, երրորդը աչքերից և այդպէս բոլորն էլ հիւանդ, բոլորն էլ գնում են բժշկվելու։ Ֆուրգօնչիների թիւը չը նայելով որ շատ է, բայց մի մարդ տանելբերելու համար 15 ռուբլուց պակաս չեն վերցնում (սովորականը 4 ր. է)։

Վերադարձողները միանգամայն առողջացած են և պատմում են, որ երեք օրից աւելի մնալ չէ լինում ջրի մէջ, մարդ դուրս գալիս է և երեք օրը օրէնը մի անգամ լողանալով կատարեալ առողջանում է, թէկուզ 20 տարվայ ցաւ լինի։

Ցանկալի է, որ բժիշկները ուշադրութիւն դարձնէին այդ ջրի վրա։

* * *

Առևտուրը Բագուի համար սովորական ամառվայ առևտուրն է. քաղաքացիք ցրված են. գնողների թիւը պակաս։

Բաքուում վերջին երկու տարին, մանաւանդ այս 1913 թ., երեկոյեան զուարճատեղերը բաւական շատ են։ Անցեալ տարիներում մարդիկ զուարճանում, իրանց բաւականութիւնն էին ստանում գինետներում, գարեջրատներում ու այլ ոչ պատուաբեր տեղերում, սակայն այժմ բաւական մեծ թիւով յանախում են սինեմատօգրաֆներ, ուր վճարում են 10—50 կոպէկ և ժամերով նստում, պատկերները նայում, անձայն ներկայացումներ տեսնում։ Սակայն չը պիտի մոռանալ, որ ի ցոյց հանված պատկերների բովանդակութիւնը շատ էլ բարոյական սերմեր չեն ցանում ներկայ գտնվողների սրտերում, և ցանկալի է, որ պատկերների ընտրութիւնը փոքր ինչ խնամքով կատարվի։ Ս. Դարագաշ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Նօվօ-Տեմիրհօվից ստացված տեղեկութեան համաձայն Կովկասի փոխարքայ կոմս Ի. Ի. Վօրոնցօվ-Դաշկովը Թիֆլիս կը վերադառնայ սեպտեմբերի սկիզբներին։

◆ Դեկտեմբերին Թիֆլիսում VII առաջարանական համագումարը կազմակերպող կոմիտէը դիմել է քաղաքային վարչութեանը խնդրելով 2000 ռուբլի յատկացնել իբրև նպաստ ծախքերի համար։

◆ Թիֆլիսի նահանգական քաղաքային գործերի տեսանը յուլիսի 26-ին «Թիֆլիսի Կրուժօքի» վարձած քաղաքային շէնքի փլվելու կատաստրօֆայի պատճառով քննելով քաղաքային վարչութեան պաշտօնավար անձանց—քաղաքագլուխ Ա. Խատիսեանին, վարչութեան անդամներ՝ իշխ. Ա. Մ. Աբաշիդզէ-Երկայնաբազուկին, իշխ. Ն. Ե. Արղութեան-Երկայնաբազուկին և Գ. Դ. Ժուրուլիին ու վարչութեան գործավար Կ. Ֆ. Խախանովին և քաղաքային ճարտարապետ Դ. Գ. Զիսլիէվին—պատասխանատուութեան ենթարկելու գործը՝ գտաւ, որ փոխարքայի կարգադրութեամբ կատարված քննութեան տուեալների հիման վրա մեղադրանք է ընկնում վարչութեան վերոյիշեալ անդամների վրա ծառայութեան վերաբերմամբ անկանոն գործողութիւններ կատարելուն համար։ Բացի դրանից նոյն քննութեամբ մեղադրվում են. ա) վարչութեան անդամ Մ. Ն. Աթաբէգեանը, որ ժամանակաւորապէս շինարարական մասի վարիչ Ա. Մ. Արղութեան-Երկայնաբազուկին փոխարինելով անկանոն է վարվել՝ ստորագրելով շէնքի վերաշինութեան յատակագծի պատճէնի վրա, որպէսզի չէ հաստատած խնայում վարչութեան մէջ եղած իսկական յատակագծին, և բ) ճարտարապետ Դ. Գ. Զիսլիէվը անկանոն գործողութիւններ կատարելուն համար։ Խախանովին պատասխանատուութեան ենթարկելու համար բաւարար հիմքեր չը կան։ Այդ բոլորի հիման վրա տեսանը որոշեց. բացատրութիւն պահանջել այդ մասին քաղաքագլուխ Ա. Խատիսեանից և վարչութեան միւս բոլոր անդամներից։ Իսկ Խախանովի դէմ սկված գործը դադարեցնել։

◆ Ոստիկանապետի օգնականի պաշտօնակատար Լէվաշէվը յուլիսի 21-ին դիտել է Մագաթեան կղզու վրա Վասիլի Զախարեանցին, Իվան Դէմուրովի, Ակիմ Կուչուաշվիլիի, Վլադիմիր Տաբլիաշվիլիի, Բէսօ Տէտրաձէի և Իվան Կուրխուլիի կօլբասեղէնի խանութները։ Այդ խանութներից վերցված նմուշները Լէվաշէվը ուղարկել է քաղաքային լաբորատորիան քննութեան ենթարկելու։ Վերջինս տեղեկացրել է, որ Բէսօ Տէտրաձէի, Իվան Կուրխուլիի, Ակիմ Կուչուաշվիլիի և Իվան Դէմուրովի խանութներից վերցված կօլբասները հոտելու նշաններ են պարունակում իրանց մէջ, իսկ Վլադիմիր Տաբլիաշվիլիից վերցրած կօլբասը ներկված է, որը խստիւ արգելվում է օրէնքով։ Ցանցաւորները ենթարկվում են պատասխանատուութեան։

◆ Քաղաքային վարչութիւնը 2 օր առաջ միջնորդութիւն է յարուցել Աւճալեան ջրանցքը ընդարձակելու և բարելաւելու համար 400,000 ռուբլու փոխառութիւն կընդունելու թոյլտուութիւն ստանալու։

◆ Քաղաքային վարչութիւնը հրաւէր է ստացել մանակցելու Կիէվում առաջիկայ սեպտեմբերին տեղի ունենալիք քաղաքային ներկայացուցիչների համառուսական համագումարին։

◆ Վերայի քաղաքային այգին Տեխնիչեսկայա փողոցի հետ միացնելու նպատակով վարչութիւնը քաղաքի նախահաշիվի մէջ մտցնում է 15,000 ր. Կուբի վրայով ոտով գնացողների համար կամուրջ շինելու։ Նոյն այգին գնալու ճանապարհը, ինչպէս յայտնի է, անցնում է Վերայի կամուրջի մօտից գետափով դէպի վեր, գեներալ Գ. Կօրգանովի հողամասի միջով։ Քաղաքային վարչութիւնը փորձեց շինել այդ ճանապարհը, բայց հողատէրը ոչ միայն կանգնեցրեց աշխատանքները, այլև սպառնում է բոլորովին փակել։ Վարչութիւնը մտադիր է խնդրել գեներալ Կօրգանովին, որպէսզի՞ նա թոյլ տայ։

◆ Վօրոնցօվի կամուրջին կից Վելիկոկնեաժեսկայա փողոցի փլուածքի նորոգութեան համար քաղաքային վարչութիւնը յատկացրել է 12,000 ռուբլի։

◆ Գնահատական տուրքերի գանձումը ներկայ ամարային ամիսներում ընթանում է բաւականին դանդաղ, շնորհիւ այն հանգամանքի, որ անատէրերից շատերը ամառանոցներում են կամ ընակարանները դատարկված են և մասամբ էլ տների վերանորոգութեան ծախքերն են հոգում։

◆ Քաղաքային վարչութիւնն ունի ստանալիք զինուորական-շրջանային վարչութիւնից 225,000 ռուբլի՝ քաղաքային ջրմուղից զանազան պետական հաստատութիւնների և զօրամասերի ջուր տալու համար։ Արդէն համապատասխան վարչութիւնից թոյլատրված է ստանալ այդ գումարը։

◆ Զը նայելով լրագրական տեղեկութիւններին, Թիֆլիսի քաղաքային ինքնավարութեան ելեմտի նախահաշիւը դեռ ևս ապագրութեան չէ տրված, այն պատճառով, որ հարկաւոր նիւթերը պատրաստված ու կարգի չեն դրված։

◆ Յուլիսի 25-ին I և II քաղաքամասերի սանիտարական մասնաժողովը, բաղկացած դումայի սանիտարական բժիշկ Վ. Պ. Ֆօմինա-Օսիպովայից, սանիտարական հոգաբարձու Ր. Գ. Տերէգուլովից ու Մ. Ի. Բէլօզերսկիից և սանիտարական վերակացու Ա. Ի. Սարգսեանից, դիտեց 20-ից աւելի առևտրական հաստատութիւններ Օլգինսկայա փողոցի վրա։ Նկատված պակասութիւնները ուղղելու համար ժամանակ է տրված և մի քանիսի վրա արձանագրութիւններ են կազմված։

◆ Հալաբարի կլուբը ձմերային շէնքի համար 55,000 ռուբլով գնել է Հասան-Ջալալեանի տունը իր հողով Կախետինսկայա փողոցի վրա։

◆ Թիֆլիսի վաճառականական բանկը հոկտեմբերի մէջերքին տեղափոխվում է Թիֆլիսի առաջին փոխադարձ վարկի հէն ընակարանը Խարազեանի տանը։

◆ Թիֆլիսի կլուբների գրքերից երևում է, որ 1912 թուին լօտոյախաղի մէջ տարած ընդհանուր գումարը անցնում է 800,000 ռուբլուց։

◆ Դարձեալ նոր յարձակումն է գործված զինուոր պահապանի վրա։ Այս անգամ նահանգական բանտի մօտ 5-րդ քաղաքամասում։ Ինչպէս վառօդանկուղների մօտ, այստեղ ևս յանկարծակի սկսվում է հրացանաձգութիւն, որի սկզբնական ձայներից դէպքի տեղն են գալիս ոստիկանապետի պաշտօնավար Ն. Գ. Սարոյէվ, օգնական Գ. Վ. Լէվաշէվը։ Յարձակումը գործել են Թիֆլիսի 15-րդ գրէնադիրեան գնդի զինուոր Պետր Կօզլենկօյի վրա, որը վիրաւորվելով ոտքից շուտափոյթ օգնութեան կառքով ուղարկվել է զինուորական հիւանդանոց։ Նա պատմել է հետևեալը, որ երբ ինքը կանգնած էր պահակատեղում բանտի առաջ, լսում է գնդակի ձայն, նայում է և տեսնում վանդակի մօտ երկու հոգի, մէկը գեղջուկի հագուստով, իսկ միւսը՝ գեղջկուհու։ Նա նրանցից պահանջում է հեռանալ այդ տեղից. նրանք հեռանում են. բայց քիչ յետոյ տղամարդը նորից է երևում և խլոյն կրակում պահապանի վրա և վիրաւորում։ Պատասխանում է վերաւորը. ապա գալիս են զինուորները այստեղ ու սկսում են հրացանաձգութիւն, ոստիկանութիւնը ևս շուրջկալ է կատարում, որոնում են մինչև առաւօտ, բայց յանցաւորներին գտնել չէ աջողվում։ Բոլորովին ապշեցուցիչ են զինուոր պահապանների վրա յարձակվելու դէպքերը. եթէ դրսից է յանցաւորը, ինչու չեն կարողանում մինչև այսօր էլ գտնել։ Թէ, ինչպէս խօսում են, այդտեղ կայ բոլորովին ուրիշ ատառ։ Քանի որ զինուորները ապարդիւն են անցնում, վատ չէր լինի, եթէ զինուորական վարչութիւնը իրանից սեպհական նրշանակէր մօտակայքում՝ պարզելու իրողութիւնը և արմատախիլ անելու այն չարիքը, որ, գուցէ, արհեստականօրէն նպատակ ունի թիւրիմացութիւններ առաջ բերել։ Այս վերջին դէպքը արդէն որոշ չափով հիմք է տալիս կարծելու, որ ցուցումները, յամենայն դէպս, բղխում են մութ աղբիւրից, որոշ դիտումներով։ Պրօվօկացիա չէ վերջապէս։

◆ Ոստիկանական հրամանի մէջ առաջարկվում է պրիսաւներին հետևել խալիչա մաքրողներին, որոնք խաբելով դիւրահաւատ բնակիչներին ստանում են նրանց խալիչաները լուանալու ու մաքրելու, թողնելով կեղծ անցագիրներ, և անյայտանում են տանելով իրանց հետ նաև խալիչաները։

◆ Երկու տարի առաջ Սանտուկիում ինքնուս նկարիչ Կ. Գ. Գրիգորեանցը կազմակերպել էր իր սեփական նկարների ցուցահանդէս։ Նկարները ներկայացնում էին կովկասեան լեռների ձիւնապատ կատարներ ու լեռնային պէյզաժներ։ Հմարեա բոլոր նկարներն էլ այն ժամանակ վաճառված էին։ Մի քանի մեծ նկարներ գնել է Վլադիկովկասեան երկաթուղային վարչութիւնը և ներկայումս գտնվում են Կիսլովոդսկի կուրկարները։ Ներկայումս Գրիգորեանը իր նոր նկարները ցուցադրել է այդու ծածկված շուկայում։ («Ս. Ֆ.»)

◆ Վ. Ս. Փարէմբօյին նահանգապետը թոյլատրել է հրատարակել Թիֆլիսում ամենօրեայ ռուսերէն լրագիր «Тифлисская Народная Копейка» անունով։

◆ Կօնտրօլեօր-տեխնիկի պաշտօն ստանալու համար քաղ. վարչութեան մէջ ստացված են 10-ից աւելի խնդիրներ։

◆ Հայոց Դրամատիկական Ընկ. խորհուրդը արդէն պայմանաւորվել է գերասան Զարիֆեանի հետ առաջիկայ թատերաշրջանի համար։

◆ «Մշակի» № 156-ի մէջ յիշված երևանցի աղքատ պառաւ կնոջ օգտին ստացանք՝ 1) Իզօբիլնայա կայարանից՝ Ս. Եաղուբեանից 5 ռուբ., 2) Էջմիածնից՝ Անտ. Ահարոնեանից 3 ռուբ.։ Յիշեալ 8 ռուբլին, ինչպէս նաև մի անյայտից ստացված 1 ր.՝ յանձնեցինք ըստ պատկանելոյն։

◆ Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը շրջաբերական է ուղարկել ուսումնարանական շրջանների հոգաբարձուների միջոցով միջնակարգ և բարձրագոյն դպրոցների վերատեսուչներին, մատնանշելով որ զինուորական ծառայութեան վերաբերեալ նոր կանոնների համաձայն դպրոցների սաներին ուսումն աւարտելու համար լրացուցիչ ժամանակ տալ այլևս չէ թոյլատրվում։ Նոր կանոնադրութիւնը գործադրութեան մէջ է մտնում 1913 թուի դեկտեմբերի 1-ից։ Ուստի նրանք, որոնք ուզում են լրացուցիչ ժամանակ խնդրել ուսումն աւարտելու նպատակով, պէտք է խնդրամատոյց լինեն մինչև առաջիկայ դեկտեմբերի 1-ը։ Այդ նպատակով տրված խնդիրքների վրա պէտք է անպատճառ լինի նկատողութիւն, թէ ե՛րբ է նա ներկայացված դպրոցի վարչութեանը։ Դեկտեմբերի 1-ից յետոյ ստացված դիմումներն ու խնդիրքները չեն յարգվի։ «День» լրագրի ասելով, առաջարկված է միջնակարգ ու բարձրագոյն դպրոցների վարչութիւններին անմիջապէս ծանօթացնել ուսանողներին այդ շրջաբերականի հետ։

ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

1) «Էջքիզներ», Գ. Բաշինջաղեանի, Թիֆլիս, 1913 թ., էջ 186, գ. 50 կ.։ 2) «Մայրենի Աշխարհ», Զիթունիի, Կ. Պոլիս, 1913 թ., էջ 141, գ. 6 ղր.։ 3) «Գործք Առաքելոց», Արշակ քահ. Մինասեանցի, Թիֆլիս, 1913 թ., էջ 115, գ. 30 կ.։ 4) «Գործակատար Մարտիրոսը», Ս. Մ. Շահնազարեանցի, Թիֆլիս, 1913 թ., էջ 39, գ. 7 կ.։ 5) «Պան լէյտենանտ Թոմաս Գլանի թղթերից», Կնուտ Համսունի, թարգմ. Աւ. Իսահակեանի, Թիֆլիս, 1913 թ., էջ 173, գ. 30 կ.։ 6) «Իսանն Ահեղի մահը», ողբերգութիւն 5 արարուածով, կոմս Ա. Կ. Տօլստոյի, թարգմ. Պ. Յովհաննիսեանի, Թիֆլիս, 1913 թ., էջ 112, գ. 30 կ.։ 7) «Մօտէնա», Վ. Վենիչենկոյի, թարգմ. Զուլալի, Կիրսանո, 1913 թ., էջ 36, գ. 50 փարա։ 8) «Յովհաննէս Յովհաննիսեան, սիրոյ և գաղափարի սգաւոր երգիչը», Յովհաննէս Մալխասեանի, Թիֆլիս, 1913 թ., էջ 45, գ. 15 կ.։ 9) «Արևելահայ աշխարհաբարի քերականութիւնը», մասն I, ստուգաբանութիւն, Դաղբաշեանի, Թիֆլիս, 1913 թ., էջ 112, գ. 50 կ.։ 10) «Այգեհատն», մասն II, հ. Ա. Գոնտաքճեանի, Վենետիկ, 1913 թ., էջ 315, գ. 2 ֆրանկ։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 26 յուլիսի

«Մշակ» և «Հօրիզոն» թերթերում տպած կոչով գերասան Աբէլեանը առաջարկում է գերասաններին և գերասանուհիներին դիմել իրան պայմանների մասին, քանի որ ինքը ձեռնարկում է գաւառներում թատրօնական գործը։

Գաւառներում թատրօնական գործի ձեռնարկութիւնը և իրագործումը մի շատ համակրելի և ամեն խրախուսանքի արժանի միտք է, որի համար գերասան Աբէլեանի վերոյիշեալ կոչը կարելի է ողջունել միայն, սակայն կոչի սկզբում դրված պարբերութիւնը—«Որովհետև այս տարի ևս Դրամատիկական Ընկերութիւնը չը կամեցաւ վերցնել իր վրա գաւառներում թատրօնական գործը կազմակերպելու նախաձեռնութիւնը, ուստի»... և այլն—մեզ և ամեն մի ընթերցողի և մանաւանդ Դրամատիկական Ընկերութեան անդամի միտքն զարմանք է պատճառել, թէ ինչ կարիք կայ այդ կոչը սկսել Դրամատիկական Ընկերութեան հասցէին շղրտած յանդիմանական դարձուածքով։

Գերասան Աբէլեանին պէտք է շատ լաւ յայտնի լինի, որ Ընկերութեան հէն կանոնադրութեամբ վարչութեան գործունէութիւնը սահմանափակված էր միմիայն Թիֆլիսով, ուրեմն գաւառական թատրօնի մասին խօսք անգամ չէր կարող լինել։ Երկրորդ՝ այս տարվանից գործադրվող նոր կանոնադրութեամբ Ընկերութիւնը իրաւունք ունի գաւառներում միայն ճիւղեր ունենալ, իսկ երբ ճիւղեր բացվեն, այն ժամանակ միայն կարող է խօսք լինել գաւառական թատրօնի գործունէութեան մասին։ Երրորդ՝ որ գերասան Աբէլեանը շարունակ քանի անգամ խոստացել է ծրագիր մշակել ընդհանուր թատրօնական գործունէութեան մասին Թիֆլիսում և դուրսը, սակայն մինչև օրս էլ դեռ «չը կամեցաւ վերցնել իր վրա» ընդհանուր ժողովներում ընդունված իր առաջարկութեան ծրագրի մշակումը և ներկայացնել Ընկերութեան վարչութեան կամ ներկայ խորհրդին ստանալու Ընկերութեան հաւանութիւնը գործադրութեան համար...

Իսկ ներկայումս, ինչպէս հաստատապէս տեղեկացանք, խորհուրդը, ի նկատի առնելով որ գաւառներում բացվում են Ընկերութեան ճիւղեր, գերասանների հետ պայմանաւորվելիս, մտցնում է նաև այն կէտը, որ թատերաշրջանից յետոյ նորից նրանք, եթէ խորհուրդը կամենայ, պարտաւոր են պայմանաւորվել գաւառական թատրօնի համար։

Ահա թէ ինչու անտեղի և զուր է բաղմամեայ գործիչ՝ գերասան Աբէլեանի, Դրամատիկական Ընկերութեան անդամի և նրա հետ շատ տարիներ գործ ունեցած, իբրև բեժիսեօր և գերասան և նաև ներկայումս էլ իբրև Ընկերութեան պատուաւոր անդամի, նրա կողմից Ընկերութեան հասցէին շղրտած յանդիմանական դարձուածքը։

Ընկերութեան անդամ

—

Կօկանդ, 19 յուլիսի

«Մշակի» 40-ամեակի առիթով Կօկանդում ես նուիրեցի 50 ռուբլի, որպէսզի հինգ տարի ուղարկէք «Մշակի» համարները այս հասցէով՝ «Шушу, Бахишу Беглярову, Դահրաւ գիւղի հասարակութեան»։ Որովհետև գիւղի հասարակութիւնը չէ ստանում «Մշակ», ուստի խնդրեմ յայտնէք. ուղարկում էք «Մշակ» թէ ոչ, կամ ի՞նչ հասցէով։

50 ռուբլին ուղարկված է Կօկանդում ժողովված գումարին կցված։

Ճարտարապետ Կ. Խաչատրեան

Ծանօթ. խմբ.—Դահրաւ գիւղի հասարակութիւնը «Մշակ» չէ ուղարկվում, որովհետև այն նուէրը, որ սրանից աւելի քան մի տարի առաջ արված է եղել Կօկանդի հայ գաղութի կողմից «Մշակի» 40-ամեայ յօբելեանի առիթով և որին կցված է եղել ճարտարապետ պ. Կ. Խաչատրեանի նուիրած 50 ռուբլին, դեռ մինչև այսօր չէ հասել ոչ խմբագրութեան և ոչ էլ «Մշակի» 40-ամեակը տօնող յօբելեանական յանձնաժողովի ձեռքը։ Արդարև սրանից շուրջ տասն օր առաջ խմբագրատունս մտաւ Կօկանդի ծխատէր Ներսէս ք. Աբրահամեանը և յայտնեց, թէ Կօկանդում հանգանակված գումարը ամբողջովին գտնվում է այդ քաղաքում կազմված յօբել. մասնաժողովի նախագահի մօտ, որպէսի գումարը սակայն մինչև օրս մենք չենք ստացել։

—

Շնող գիւղ, 23 յուլիսի

Յայտնում եմ խորին շնորհակալութիւնս Թիֆլիսի իմ ընկերներին և բարեկամներին, որոնք մասնակցեցին իմ թանգագին ամուսին Մագթաղինէ Մկրտումեանի յուղարկաւորութեանը մինչև կայարան։ Շնորհակալութիւնս եմ յայտնում նոյնպէս և իմ ծնողդ՝ այր Շնող գիւղի երիտասարդութեանը և Հ. քահանային, որոնք կայարանից մինչև գիւղ դագաղը ձեռքերի վրա տարան։

Վաղաժամ ամուսնուս մահը տեղի ունեցաւ յուլիսի 21-ին։

Բագրատ Մկրտումեան

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Բերլինում խօսակցութեան նիւթ է դարձել Ֆրանսիայի և Ռուսաստանի տարակարծիքութիւնը Կաւալայի հարցում։ Ֆրանսիան և մասամբ Անգլիան՝ ուզում են Յունաստանից ստեղծել ուժեղ ծովային պետութիւն Միջերկրական ծովում։ Ռուսաստանը այդ բանը իրան համար համարում է վտանգաւոր և ամեն կերպ դիմադրում է այդ առաջարկին։

◆ Աթէնքում երկիւղ են կրում, որ Կաւալան Յունաստանին տալը առիթ կը ծառայի Իտալիայի համար թշնամական գործողութիւններ սկսելու։ Ի նկատի առնելով, որ Ադրիական ծովում կարող են բարդութիւններ ծագել Կօրֆու կղզին յայտարարված է պատերազմական դրութեան մէջ։

◆ Անգլիական տուֆրաժիստուհիները վեց ռումբերով պայթեցրին և հրդեհեցին բարօնուհի սրը Զօրջ Նիջէսի շքեղ ամրոցը Դէվոնշիրում և Խիդդօնն ամրոցը Կուլպէյում։ Երկիւղ են կրում նոր փորձերից։ Ոստիկանութիւնը առանձին աչալրջութեամբ պահպանում է ս. Պողոսի տաճարը Լօնդօնում։

◆ Սօֆիայից հեռագրում են, որ լուրերի համաձայն Բօրիս արքայորդին հոգեկան հիւանդութիւն է ստացել։

◆ Սիօնիստները տեղեկութիւն են ստացել, որ Թիւրքաց կառավարութիւնը, ֆինանսական տագնապից հարկադրված, դիմումն է արել սիօնիստական շարժման ղեկավարներին գնել Պաղեստինը՝ այնտեղ հրէական ինքնավար համայնք ստեղծելու համար։

◆ Կրասնօկուտսկում 70 տարեկան ծերունի Մինչենկօն կացինով խողխողել է իր որդուն, որը խուլիգանի հրաչակ էր վայելում։

◆ Սեվաստոպօլից հեռագրում են, որ այնտեղ թիւրք կառավարութեան գործակալները խոշոր քանակութեամբ մսացու, ալիւր և խոտ են գնում։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌ. ԳՈՐԾ.)

26 յուլիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Պօստ-հեռագրական տեսչութիւնը յարաբերութիւն է սկսել եապօնական կառավարութեան հետ ռուսական հեռագրալարերը եապօնական հետ Կօրէայում և Սախալինում միացնելու համար, որպէս զի արագացվի հեռագրական հաղորդակցութիւնը Եապօնիայի հետ։

ԿՐԱՄՆՕՑԷ-ՍԷԼՕ։ Յերեկվայ ժամը 4-ին Բարձրագոյն ներկայութեամբ տեղի ունեցան թնդանօթաձգութիւն և ռազմական վարժութիւններ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Պետական բանկը 8½ միլիօն յատկացրեց կայսրութեան զանազան մասերում նոր էլէվատօրներ շինելու համար։

Պետական բանկի խորհուրդը որոշեց մի շարք միջոցներ ձեռք առնել կրէդիտը էժանացնելու և մանր հաղատէրերին հունձի ժամանակ դրամական փոխառութիւնը շտապեցնելու համար։

ԹԱՌՆ ԼՈՒՐԵՐ

◆ Կ. Պոլսի տիեզերական պատրիարքը, որը կանոնական տեսակէտից ենթարկվում է Աֆոնի վանական միաբանութիւնը, բարձրացրել է իր ձայնը ի պաշտպանութիւն բռնութեամբ Աֆոնից հեռացված միաբանների։ Ոչ թէ արդարացնելով նրանց ուսմունքը, այլ զուտ սկզբունքային եկեղեցական իրաւունքի հիման վրա, պատրիարքը հրաւիրում է սրբազան սինոդի ուշադրութիւնը, որ եթէ նրանք որևէ բանում յանցաւոր լինեն, հոգևոր կոչումից զրկվելը կարող է տեղի ունենալ միայն պատրիարքից հրաւիրված եկեղեցական դատարանի վճռով։ Կ. Պոլսի պատրիարքի հետ այդ հարցում համերաշխ են Երուսաղէմի և Ա. Լեքսանդրիայի պատրիարքները։

◆ Կայծակից վերջին տարիներս յաճախակի վնասվելու դէպքերը առիթ են տուել Լօնդօնի բժշկական ընկերութեանը զրաղմունքի նիւթ դարձնելու այդ հարցը։ Այդ տեղ կարդացվել է մի զեկուցում, որը մի շարք դէպքեր է թուել, երբ, ընդհանրապէս, կայծակը բոլորովին ըստ ժողովրդական էլ է ունեցել, որ կայծակը կարող է ոչ միայն սպանել, այլ և բժշկել։ Մի ծերունի նորերս կայծակնահար է լինում։ Նա ընկնում է անզգայացած, բայց երբ ուշքի է գալիս, զարմացած յայտնում է իր շրջապատողներին, որ երեք տարի է՝ ինչ նա խլացել էր, մինչդեռ այժմ լսում է։ Մի ուրիշ աւելի ապշեցուցիչ դէպք։ Մի բանվոր կուրանում է աջ աչքից և այնուհետև սկսում է վատ տեսնել նաև ձախից։ Մի անգամ դաշտից վերադառնալիս նրան կայծակ է խփում։ Երբ գտնում են նրան, կարծում են, թէ արդէն մեռած է, բայց նա հէնց այդտեղ էլ ուշքի է գալիս և պատմում, որ կայծակը իրան չէ վնասել, որ այժմ ընդհակառակը ինքը շատ լաւ տեսնում է երկու աչքով։ Պատահել են դէպքեր, երբ կայծակից բժշկվել են նաև համրներ, անդամալոյծներ։

◆ Տիկնիկների բուժող նշանակութեան մասին բրիտանական բժշկական ճեմարանին արած իր զեկուցման մէջ Ֆլենսբուրիի (Անգլիա) երեխաների հիւանդանոցի վերատեսուչ բժ. Թոմասը յիշատակում է մի վերին աստիճանի հետաքրքրական դէպք, թէ ինչպէս նորածին երեխային ազատել են մահից՝ մոմից պատրաստած տիկնիկի օգնութեամբ։ Մի կին ծնել է երկուրեակներ, որոնցից մէկը շատ նուազ էր և մի քանի շաբաթից յետոյ մեռնում է։ Այդ օրվանից ողջ մնացած երեխան սկսում է նիհարել, ու մայրը չէ իմանում ինչպէս օգնել խեղճ երեխային։ Պատահաբար հարևանուհին նրան խորհուրդ է տալիս երեխայի օրօրոցում դնել նրա հասակի տիկնիկ, ասելով որ ինքը արդէն այդպիսի դէպքերում փորձել է։ Հէնց որ մայրը, գնելով մոմից շինած տիկնիկ, դնում է երեխայի կողքին, վերջինս մեկնվում է դէպի նա, զուարթանում և այդ օրվանից էլ սկսում արագութեամբ լաւանալ։ Բժ. Թոմասը աւելացնում է, որ այդ առիթով նա դիմել է անկեսարի, հարցրել է շատերից, և պարզվել է, որ այդ միջոցը նոր չէ, որ անգլիական գիւղերում հին կանայք գործ են ածում շարունակ։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ե. ՏԵՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

1913 թվ. ապրիլի 18-ից մինչև 1914 թ. ապրիլի 17-ը։

(Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ.—**Արագ գնացքը** № 6—10 ժ. 16 ր. առ., հասնում է Աղստաֆա 12 ժ. 34 ր., Դանձակ 3 ժ., Եւլախ 4 ժ. 31 ր., Հայֆի-Կարսլ 8 ժ. 6 ր. եր., Բաքու 11 ժ. 13 ր. գիշ.։ **Պօսթսաար գնացքը** № 4—10 ժ. 16 ր. գիշ., հասնում է Աղստաֆա 1 ժ. 6 ր. գիշ., Դանձակ 4 ժ. 16 ր. առ., Եւլախ 6 ժ. 15 ր. առ., Հայֆի-Կարսլ 10 ժ. 46 ր. առ., Բաքու 3 ժ. 31 ր. ցերեկ։ **Մարդասար գնացքը** № 8—6 ժ. 29 ր. եր., հասնում է Աղստաֆա 8 ժ. 50 ր. եր., Դանձակ 11 ժ. 23 ր. գիշ., Եւլախ 1 ժ. 1 ր. առ.։ Հայֆի-Կարսլ 4 ժ. 42 ր. առ., Բաքու 7 ժ. 53 ր. առ., **Խառն գնացքը** № 106 (Մարդասարի պրպտութեամբ ապրանքների համար)—4 ժ. 23 ր. առ., հասնում է Աղստաֆա 8 ժ. 41 ր. առ., Դանձակ 1 ժ. 7 ր. ցերեկ., Եւլախ 5 ժ. 19 ր. ցերեկ., Հայֆի-Կարսլ 12 ժ. 29 ր. գիշ., Բաքու 7 ժ. 28 ր. առ.։

ԲԱԳՈՒՄ.—**Պօսթսաար գնացքը** № 3—9 ժ. 51 ր. առ., հասնում է Միխայլօվօ 1 ժ. 56 ր. ցերեկ., Բաթում 11 ժ. 8 ր. գիշ.։ **Մարդասար գնացքը** № 7—4 ժամ 40 ր. ցերեկվայ, հասնում է Միխայլօվօ 8 ժ. 46 ր. եր., Բաթում 5 ժ. 40 ր. առ.։ **Մարդասար գնացքը** № 9—10 ժ. 20 ր. գիշ., հասնում է Միխայլօվօ 2 ժ. 31 ր. գիշ., Բաթում 10 ժ. 59 ր. առ.։ **Խառն գնացքը** № 107 (Մարդասարի պրպտութեամբ ապրանքների համար)—2 ժ. 48 ր. գիշ., հասնում է Միխայլօվօ 8 ժ. 20 ր. առաւ., Բաթում 10 ժ. 18 ր. գիշ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ.—**Պօսթսաար գնացքը** № 4/3—12 ժ. 51 ր. ցերեկ., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 10 ր. եր., Ալէքսանդրօպոլ 11 ժ. 48 ր. գիշ., Էջմիածին 5 ժ. 12 ր. գիշ., Ուլուխանլու 5 ժ. 40 ր. գիշ. (առանց նրան մտնելու), Նախիջևան 10 ժ. 15 ր. առ., Ջուլֆա 11 ժ. 42 ր. ցերեկ.։ **Մարդ.-ապրանքատար գնացքը** № 24/23 (միայն II և III կարգի վագոնները)—8 ժ. 8 ր. եր., հասնում է Ղարաքիլիսա 3 ժ. 23 ր. գիշ., Ալէքսանդրօպոլ 6 ժ. 57 ր. առ., Էջմիածին 12ժ. 10 ր. ցերեկ., Ուլուխանլու 12 ժ. 38 ր. ցերեկ., Երևան 1 ժ. 33 ր. ցերեկ.։ **Մարդասար-ապրանքատար գնացքը** № 14/13—12 ժ. 46 ր. գիշ., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 13 ր. առ., Ալէքսանդրօպոլ 11 ժ. 50 ր. ցերեկ., Կարս 4 ժ. 18 ր. ցերեկ.։

ԲՈՐԺՕՄԻ.—**Մարդասար գնացքը** № 17/18—8 ժ. 2 ր. առ., հասնում է Դօրի 10 ժ. 41 ր. առ., Բորժոմ 9 ժ. 31 ր. ցերեկ.։ **Մարդասար** № 19/20—3 ժ. 18 ր. ցերեկ., հասնում է Դօրի 5 ժ. 59 ր. ցերեկ., Բորժոմ 1 ժ. 2 ր. երեկ.։

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՄՆՈՒՄ

ԲԱԳՈՒՄ.—**Արագ գնացքը** № 5—9 ժ. 35 ր. եր. **Պօսթսաար գնացքը** № 3—9 ժ. 1 ր. առ.։ **Մարդասար գնացքը** № 7—3 ժ. 53 ր. ցերեկ.։ **Խառն գնացքը** № 107—2 ժ. 12 ր. գիշ.։

ԲԱԹՈՒՄԻՑ.—**Պօսթսաար գնացքը** № 4—9 ժ. 16 ր. երեկ.։ **Մարդասար գնացքը** № 8—5 ժ. 54 ր. ցերեկ.։ **Մարդասար գնացքը** № 10—8 ժ. 40 ր. առ.։ **Խառն գնացքը** № 106—3 ժ. 38 ր. գիշ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ.—**Պօսթսաար գնացքը** № 4Ա/3—7 ժ. 32 ր. եր.։ **Մարդ.-ապրանքատար գնացքը** № 26/25—(II և III կարգի վագոնները)—10 ժ. 50 ր. առ.։ **Մարդ.-ապրանքատար գնացքը** № 16/15—7 ժ. 28 ր. առ.։

ԲՈՐԺՕՄԻՑ.—**Մարդասար գնացքը** № 17/18—11 ժ. 7 ր. եր.։ **Մարդասար գնացքը** № 19/20—7 ժ. 38 ր. առ.։

ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մեր պատիւի գեղարուեստ. բացիկների շրջանառութիւնը աւելի ընդարձակելու համար մենք ուղարկում ենք **ärhapar մի ous oflıı արօմ գեղարուեսս. 300 hus բացիկներով** կամ թէ վճարում ենք այլօմի փոխարէն,

ՏԱՄՆԵՒՀԻՆԳ ԲՈՒԲԼԻ ԿԱՆԽԻԿ ԴՐԱՄ

Նրան, ով ուղիղ կերպով կը վճռէ ստորև Երերված խնդիրը և կը պատուիրէ մեզ մօտ 25 հատից ոչ պակաս գեղարուեստ. բացիկներ՝ ուղարկելով 75 կ., կամ թէ վերադիր վճարով՝ 95 կ.։

? ?

Քառակուսի 9 վանդակներում 1—9 թուանշանները պիտի դեսեղել այնպէս, որ իւրաքանչիւր ուղիղ գծի (3 վանդակի) գումարը լինի 15, և որ այդ գումարը կրկնվի, ըստ կարելոյն, աւելի չատ տեղամ։ Խնդիրը լուծելու իրաւունքը պատկանում է նրան, ով մեզ մօտ պատուիրած և վճարած ունի 25 հատ բացիկների համար։ Որովհետև իւրաքանչիւր անձ, ով ուղիղ կերպով վճռած ունի խնդիրը, սովնում է պրէմիա, հետևաբար՝ դիմում անելոյց պիտի յայտնել, թէ որ պրէմիան է ցանկանում—այլօմը թէ դրամը, նոյնպէս և նամակի մէջ նշանակել, առանձին բարակ թղթի մի փաթրկի կողի վրա, ճշգրիտ հասցէն։

Օ-ՎՕ ՄԵՐԿՈՒՐԻ, ԼՕԴՅԼ № 37.

(Լ. 13040) 1—1

ԱՌԵՒՏՐ. ՏՈՒՆ Ե.Ա. ԾԱՏՈՒՐԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

Ֆիրման գոյութիւն ունի **1869** թուից։ = Տելեֆոն № 2—38.

ՎԱՃԱՌՈՒՄՆ ԲԱՅԱՌԱՊԷՍ

ԲԱԶՄԱԶԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐԻ (ОБОИ)

Ռուսական և արտասահմանեան առաջնակարգ ճաբրիկաների։

Գինը—իւրաքանչիւր փաթեթը (լուլօ) 8 կ-ից սկսած։

Եմուշներն ուղարկվում են ծրր։

Վերոնշեալ պատճառով, խանութի մուտքը բակից։

(օ.մ.) 589. 8—3

ՄԵԾ-ՂԱՐԱԲԻԼԻՍԱՅԻ ծխ. երկդասեան երկսեռ դպրոցի համար հարկաւոր են միջնակարգ կրթութեամբ

ՎԵՑ ԴԱՍԱՏՈՒՆԵՐ

ա) 14 դաս ռուսաց լեզուի և 10 դաս թւաբանութեան համար։
բ) 10 դաս հայերէնի, 8 դաս հայրենագիտութեան և 6 դաս կրօնի համար։
գ) 22 դաս երգ և երաժշտութեան համար։
դ) 16 դաս ձեռագործի համար (մասնագիտ. կրթութ.)։
ե) 16 դաս հայերէնի և վերակացութեան համար։
զ) 6 դաս հայերէնի, 5 դ. թւաբ., 5 դ. երկրաչափ. և վերակացութեան համար։

Դասագինը 20 ր.։ Վերակացութեան համար վճարվում է ևս 100 ր. տարեկան։ Երաժշտութեան դասատուն կառավարելու է նաև եկեղեցական երգեցիկ և դպրոցական լարաչին երաժշտական խմբերը և դասերից դուրս ստանալու է ևս 190 ր. տարեկան։ Ցանկացողները պէտք է մինչև յուլիսի 31-ը խնդիր ուղարկեն հոգաբարձութիւնս հետևեալ հասցէով. Б.-Караклисъ. Попечительству армянскаго церк. приходскаго училища.

(օ. մ.) 578. 4—4

ԾՈՒԾՈՒՄ

Մի հայ ընտանիքում

ԸՆԴՈՒՆՎՈՒՄ ԵՆ

ՆԱԽԼԷԲՆԻԿՆԵՐ

Գերադասութիւն կը տրվի ուսուցիչներին և ուսուցչուհիներին։

Հարցնել Շուշում՝ Ասրեանցի գրավաճառանոցում։

(կ.) 595. 3—1

ՄԵԼԻՏՈՊՕԼԻ

հայոց եկեղեցու համար հարկաւոր է

ՄԻ ՏԻՐԱՅՈՒ

եկեղեցական արարողութիւններին հմուտ, ձայնաւոր և ձայնագրագէտ. ցանկալի է ամուրին։ Ամսական 30 ր. ռոճիկ, ձրի սենեակ և տարեկան մօտ 100 ր. ծիսական արդիւնք։ Դիմել՝ Мелитополь (Таврич. губ.), армянскому священнику.

(օ. մ.) 587. 4—3

Աղեքսանդրօպոլի ԱՐՂՈՒԹԵԱՆ իգական դպրոցում ազատ դասեր կան հետևեալ առարկաներից՝ հայոց լեզու, ռուսաց լեզու, հայոց պատմութիւն, Հայաստանի աշխարհագրութիւն, եկեղեցական պատմութիւն, թւաբանութիւն եւ մատեմատիկա (հանրահաշիւ, երկրաչափութիւն)—I մինչեւ VI հիմնական դասարաններում։

Առաւելութիւն կը տրվի մասնագէտների և բարձրագոյն կրթական ցէնզ ունեցողների։

Խնդրագրերը փաստաթղթերով պէտք է ուղղել մինչև յուլիսի վերջը հետևեալ հասցէով՝ Александрополь, Попечительному Совѣту Аргутинскаго Училища.

(օ. մ.) 586. 3—3

Լոյս տեսաւ և վաճառվում է բոլոր գրավաճառանոցներում

ԱՐԱՄԱՅԻՍ

Գաղափարի ճանապարհին

Գինը 1 ր. 25 կ. առանց ճանապարհածախքի (ճանապարհածախքով 1 ր. 50 կ.)։

Պահեստը Թիֆլիս, «ԳԻՐ» գրավաճառանոցում. Тифлисъ, книж. маг. «ГИРЪ».

(ու.կ.հ.հ.) 590. 5—3

ԿԱՐՍԻ հայոց ծխ. երկդասեան դպրոցի համար հարկաւոր է

մի փորձված ուսուցիչ

հայոց լեզուի, իրավունքեան, հայոց և ընդհանուր պատմութեան 25 դասի համար։ Դասագինը 30 ր.։ Դիմել կարս՝ հոգաբարձութեան, մինչև օգոստոսի 10-ը, խնդիրներին կցելով վկայականները կամ վաւերացրած պատճէնները։ Մանրամասն տեղեկութիւններ ստանալու համար դիմել դպրոցի աւագ-ուսուցիչ Կ. Գիւլնազարեանին Թիֆլիս, Баронская ул. д. № 20, кв. 2.

(ու.կ.) 588. 3—3

Թիֆլիսի Կենտրոնական Գրավաճառանոցում

Վաճառվում են հետևեալ գրքերը.

ՔԱՋԲԵՐՈՒՆԻ «Բաղա գիւղի աւերումը»	20 կ.
Մ. ՍԻԲԻՐԵԱԿ «Ակ-Բոզատ» .	15 կ.
ԵՍԱՅԵԱՆ «Լաֆֆի», կենսագրութիւն	15 կ.
ՀԱՄՍՈՒՆ Կ. «Պան». . .	30 կ.
ՄԱՐԳԱՐ «Վէպիկներ». . .	15 կ.
» «Գողը». . .	20 կ.
ՏԷՐ-ՊՕՂՈՍԵԱՆ «Շանթի Հին Աստուածները և Ստեփ. վանականի յիշատակարանը». . .	30 կ.
ՎԱՀԱՆ ՏԷՐԵԱՆ «Բանաստեղծութիւններ» հ. I. . .	1 ր.
ՅԱԿՈԲԵԱՆ ՅԱԿՈԲ «Բանաստեղծութիւններ». . . .	50 կ.
ԼԻՕ «Հայկական տպագր.» հ. I.	1 ր. 20 կ.
ԲԱՇԻՆՋԱՂԵԱՆ «Էսքիզներ». .	50 կ.
ՖՐԱՆՍ «Երեք դար ու կէս յետոյ».	7 կ.

Մինոյն գրավաճառանոցում վաճառվում են հրապարակում գտնված նոր գրքերը։ Պատուէրները կատարվում են արագ առանց ուշացնելու։

Դիմել՝ Тифлисъ, Центральная книжная торговля, С. П. Теръ-Исраеліанъ.

596. 1—1

ТРЕБУЙТЕ ВЕЗДѢ „ОДОБРИНЪ“

Только **МИХАИЛА ЛЕБЕДЕВА**

Съ надписью „Этикетъ утвержденъ правит.“.

Это средство уничтожаетъ совершенно въ нѣсколько дней застарѣлыя мозоли и бородавки съ корнемъ.

Главный складъ: **Кавказское Т-во Торговли Аптекар. Товарами—Тифлисъ, Баку, Батумъ**

(4.) 177. 0—19

Կ. Հ. Հրատարակչ. Ընկ.

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ

ա) «ՈՍԿԷ ԱՂՋԻԿ» մանկական պատկերազ. հէքիաթ. ռուս. թարգմ. Լ. Մելիք-Ադամեան, գինն է 7 կ., բ) «ԱԿ-ԲՈԶԱՏ» մանկական պատկերազ. հէքիաթ. Մ. Սիբիրեակի, թարգմ. Ս. Թորոսեանի, գինն է 15 կ., գ) «ԳՈՐԾԱԿԱՏԱՐ ՄԱՐՏԻՐՈՍԸ» ժողովրդ. գրագրաստի № 3 գրք. Ս. Մ. Շահնազարեանցի գինն է 7 կ.։ Դիմել՝ գրախանութներին, Ընկ. ճիւղերին, աշխ. անդամներին, գործակալներին և հայաբնակ վայրերի ՄԱՆՐ ՎԱՐԿԻ ԸՆԿ.։ Պահեստը Ընկ. մօտ՝ Тифлисъ, Кавказское Армянское Издательское О щ. Бебутовская № 25.

597. 2—1

ԳՕՐԻՍԻ ուսուցչական կազմը պատրաստ է. հրաւէր չը ստացողները ազատ են։

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ

518. 1—1

Թիֆլիսի Կենտրոնական Դեղատունը

սրանով յայտարարում է, որ վերաքննութիւնները տեղի կունենան օգոստոսին հետևեալ օրերը.

20-ին—Ռուսաց լեզու (գրաւոր) 4, 5, 6 և 7-րդ դաս., Թաքանութիւն՝ պատրաստական, 1, 2 և 3-րդ դաս.։

21-ին—Ռուսաց լեզու (բանաւոր) 1, 2, 3, 4, 5, 6 և 7-րդ դաս., մատեմատիկա՝ 3, 4, 5, 6 և 7-րդ դաս.։

22-ին—Գերմաներէն՝ 1, 2, 3 և 4-րդ դաս., ռուսաց լեզու՝ պատրաստ. դաս.։

23-ին—Գերմաներէն, 5, 6 և 7-րդ դաս., աշխարհագրութիւն, բնագիտութիւն, ֆիզիկա՝ բոլոր դասարաններում։

24-ին—Ֆրանսերէն՝ 2, 3, 4, 5, 6 և 7-րդ դաս., պատմութիւն՝ բոլոր դաս.։

26-ին—Կրօն՝ բոլոր դասարաններում, տեղական լեզուներ՝ բոլոր դասար., մասնագիտական առարկ.՝ 5, 6 և 7-րդ դաս., գծագրութիւն՝ 6-րդ դաս.։

Ընդունելութեան քննութիւնները՝ պատրաստական, 1 և 2-րդ դաս. մտնելու համար՝ տեղի կունենան բոլոր առարկաներից օգոստոսի 27-ին և 28-ին, իսկ միւս դասարանները մտնելու համար՝ վերաքննութիւնների օրերը։ 4-րդ, 7-րդ և 8-րդ դասար. ընդունելութիւններ չեն լինի։ Պատրաստական դաս. ստորին (այբուբենական) բաժանմունքը մտնելու համար ընդունվում են 7—9 տար. երեխաներ առանց քննութեան։

Այն աշակերտները, որոնք առանց յարգելի պատճառի որոշված օրերը չեն ներկայանայ վերաքննութիւններին, այլևս իրաւունք չեն ունենայ քննութեան ենթարկվելու։

Քննութիւնների սկիզբը առաւօտեան ժամը 8½-ից։ Մաղթանքը և պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 2-ին, առաւ. ժամը 8½-ին։

(կ.հ.) 591. 3—2

Առևտրի եւ Արդիւնաբերութեան Մինիստր. տնօրէնութեան ներքոյ գտնվող

Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐՈՒՄ

Թիֆլիս, Միխայէլեան պր. 24/4. Տելէֆօն № 976.

Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առևտրական կրթութիւն։

Դասընթացքն ատարտողներին տրվում են ատտեստատներ։

Գործնական զբաղմունքները կատարվում են կուրսերում՝ Լօնդօնի Pitman և Պարիզի Pigier դպրոցների ձեւով կազմակերպած Muster-Comptoir-ում։ Նրանք առնվում են ըստ կանոնից։ Առարկաներն են. ա) պարտադիր. 1) Հաշուապահութիւն (պարզ, խառ., գերմ., ֆրանս., ամերիկեան, բանկային և զորձարարական). 2) Առևտրական թւաբանութիւն. 3) Քաղաքատնտեսութիւն. 4) Օրէնսդիտութիւն (առևտրական իրաւունք, մուրհակի կանոնագրութիւն). 5) Առևտրական թղթակցութիւն. 6) Թաքանութիւն համրիչի վրա. 7) Պայծչագրութիւն, արագագրութիւն (ամենամամ ձեռքի ուղղումն). բ.) ոչ-պարտադիր. 1) **Ossur լեզուներ.** 2) Ծղագրութիւն. 3) Գեկտիլոգրաֆիա (ըմենդամն և ուր. և 4) Առևտր. թղթակցութիւն օտար լեզուներով։ Զբաղմունքները կատարվում են և դաս-դաս։ Ունկնդիրների թիւն շատանալեան պատճառով բացվում է երկրորդ դասընթաց բաժանմունք, որը մանաւանդ յարմար է օտարազգացիների համար։ Ունկնդիրների թիւը սահմանափակված է։ Զբաղմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ին։ Խնդրագրերի ընդունելութիւնը առ. ժամը 10—12-ը և երեկ. 4—7-ը։ Ծրագիրը և կանոնները ուղարկվում և տրվում են ձրիաբար կուրսերի շէնքում։ Կուրսերը ֆիրմաներին յանձնարարում են հաշուապահները, օղնակ. նոներ և առևտր. այլ ծառայողներ՝ կուրսերի ընթացաւարտներից և իրանց ընդունակութեամբ աչքի ընկնողներից։ (Ընթացիկ տարում կուրսերն ունեցել են 284 ունկնդիր, որոնցից 54 հոգի իգական սեռից)։

Կուրսերի հիմնադիր՝ առևտր. գիտութեան կանդիդատ՝ Տ. ՓԻԼՕՅԵԱՆ

(Ա. հ. կ.) 556. 0—8

ՄԻ ՆՈՐ ՁԵՌՆԱՐԿ „ՀԻՊՆՕՏԻԶՄ“ ՍՈՎՈՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ, ԱՌԱՆՑ ՈՒՍՈՒՑՉԻ։

Լոյս տեսաւ



ՅԱՐՈՒԹԻՒՆ ՇԵՓԵՐՋԵԱՆԻ

«ՄԱՐԴԿԱՅԻՆ ՄՏՔԻ ԲԱԶԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ ԿԱՄ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆ» գիրքը։

Այս ձեռնարկով ամեն ոք կարող է սովորել **հիպնօսիզմ**, նրա պատմութիւնը և օրէնքը։ Հիպնոտիզմի փորձառական շլջանների թէօրիաները և զանազանութիւնները։ Մարդային մտքի երկատութիւն կամ գիտակցական և ենթագիտակցական մտքի փոխկցիաները։ **Նիրճեցման** և **իմիտատիրեցման** օրէնքները։ Բլիւզիա կամ տալլուսինոպիա։ Ցեռ-հիպնօզական նեղշնչումներ։ Հիպնօզական սէանսներ և ինչպէս տալ։ Խորտրի փոխանցումն կամ տելեպաթի։ Մատաւոր պայծառատեսութիւն արթուն կամ քնած դրութեան մէջ։ Ինչպէս կառավարել երեխաներին ներշնչումով։

ՍԵՐ ՄՏՔԻՆ ԶՕՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ՆՐԱՆՑ ԳՈՐԾԱԾԵԼՈՒ ԿԵՐԾԵՐԸ.—Հնոց-ը մարդու մէջ կառավարելու ոյժը։ Անհատականութեան կարեւորութիւնը։ Դրական մտաւոր զործունէութիւն։ Ինչպէս զործածել միաքը։ Ենթագիտակցութիւն։ Ցարատեսութեան ոյժը։ Կենտրոնացման ոյժը։ Կամքի ոյժը։ Ենթագիտակցական հնարաւորութիւնները։ Ներշնչման ոյժը։ Ինչպէս զարժեցնել ենթագիտակցութիւնը։ Ինչպէս գործածել ամբողջ միաքը։ Հաւատի ոյժը։ Ինչպէս կառուցանել մի զօրաւոր կամք։ Ինչպէս ձեռք բերել ազդեցութիւն կեանքում և այլն։

Գրքի արժէքի և ուրիշ բացատրութիւնների համար դիմել նամակով հետևեալ հասցէով.Ռուսատանից. Арутюнъ Шекерджянъ, 22 Ганновская, Тифлисъ. Արտասահմանից. Haroutun Shekergian, 22 Ganovskaya, Tiflis, Caucasus, Russia.

(կ.) 385. 25—10

ԱՌԵՒՏՐԻ ԵՒ ԱՐԴԻՒՆԱԲ. ՄԻՆԻՍՏՐ. ԻՄԱՍՈՒԹԵԱՆ ՆԵՐՔՈՅ ԳՏՆՎՈՂ

ՀԱՇԻԱՊԱՀԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐ

Ն. Ռ. ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ

(Գոյութիւն ունի 1895 թ.)

Հեղինակ առևտրական հաշուապահութեան ձեռնարկի և զանազան մասնագիտական ձեռնարկների։

Տալիս է երկու տեսակ անձանց մասնագիտական առևտրական գիտութիւն 4 ամեայ դասընթացքում, ամենօրեայ պարապմունքներով։

Դասընթացքներում անցնում են.—Առևտրական և արդիւնաբերութեան զանազան ճիւղերի հաշուապահութիւն, նամակագրութեան և նամակագրութեան ճիւղի հետ միասին, զանազան սիստեմներով, կատարում իւրացումն կրկնակի իտալական սիստեմով և առևտր. թւաբանութիւն, առևտր. համակարգութիւն, մուրհակային և առևտրական իրաւունքներ, քաղաքատնտեսութիւն, վաճ ձեռագրի ուղղումն։

Ոչ պարտադիր առարկաներն են՝ 1) Օտար լեզուներ, 2) Ստենոգրաֆիա (սղագրութիւն) և 3) Բեմինգտոնի վրա գրել։

Ուսուցիչները բարձր կրթութիւն ստացած մասնագէտներ են, որոնք գործնականապէս և տեսականապէս պատրաստված են ամեն մի առարկայի համար առանձին։

Վկայագիրը տրվում են մինիստրութեան թոյլտուութեամբ։

Պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ից 1913 թ.։ Խնդրագրերի ընդունելութիւնը մինչև, լուսաւոր ժամը 9—11-ը, երեկոյեան 5—7-ը։ Ծրագիրը տրվում և ուղարկվում են ձրիաբար։ Դասընթացքներին կից հատատված են քիչ պատրաստված անձանց համար առանձին պատրաստողական և լրացուցիչ դասարաններ ռուսաց լեզուի և թւաբանութեան համար։

Անձամբ և նամակներով դիմել՝ Тифлисъ, Учредит. Бухг. Курсовъ Н. В. Абраамяну, Николаевская, 22, Телефонъ 7—44

(կ. հ. և.) 576. 0 3

ՇԱՐԺԻՉՆԵՐ ԻՍԿԱԿԱՆԸ „ԱԻԱՆՍ“

ՀՕՐԻԶՕՆԱԿԱՆ, ՈՒՂՂԱՀԱՅԵԱՅ և ՆԱԻԱՅԻՆ

(Ցօցական եւ շարժական)

1912 թի պատէնտային նոր մոդէլը մինչեւ 300 ուժի։

Ուժի մէկ միաւորի համար մէկ ժամում ծախսվում է 5/8 ֆ. նաւթ։

Ջրաղացների սարք ու կարգ։



Արժանացել է **60** մէդալի եւ ամենաբարձր պարգեւներ։

Ռուսիայում գործածութեան մէջ են **4200** «ԱԻԱՆՍ»։

Նաւօսների և էլեքտրական կայարանների ՍԱՐՔ ու ԿԱՐԳ։

ԶԳՈՒՇԱՑԷՔ ԿԵՂԾԻՔՆԵՐԻՑ։

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ Է. Ա. ԷԴԵՆԲԵՐԳԻ ԲԱԳԻՈՒՄ։

4. 522. 0—6

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный